Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22.187

Գրատարակութիւն Հնչակեան Կուսակցութեան.

Կ. ԿԱՈՒՑԿԻ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Թարգմանեց

Ս. ՍԵՊԷՀ-ԳԻՒԼԵՍԵՆ

ԳԻՆՆ Է 30 ՍԱՆՏԻՄ

ՊԱՐԻԶ
1906

330.1
Կ-22

15 JAN 2010
330.1
4-22
300
1397-ԿԱ

Հրատարակութիւն Հնչակեան Կուսակցութեան.

Կ. ԿԱՈՒՏՍԿԻ

Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Թարգմանեց

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵՍԵՆ

5011
5011

ՊԱՐԻԶ
1906

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ»

Կառուցիչ գրքոյկներից երկրորդն է։ Առաջինն է «ԳՈՐԾԱԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ» երրորդը՝ «ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՒԸ» եւ չորրորդը՝ «ՍՕՑԻԱԼԻՍՏ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ»։

Այս գրքոյկների ծագման եւ զանազան բառերի ծանօթութեան մասին տե՛ս «ԳՈՐԾԱԻՈՐ ԴԱՍԱԿԱՐԳ»-ի յառաջաբանը։

«Կապիտալիստ դասակարգը» թեեւ հարատոս, բայց շատ որոշ եւ պայծառ գաղափար է տալիս կապիտալիզմի ծագման եւ զարգացման մասին, ինչպէս եւ այն ազդեցութեան՝ որ նա գործում է կապիտալիստ, միջին եւ գործաւոր դասակարգերի վրայ։

Այս գրքոյկը անհրաժեշտ է եւ մեծ ծառայութիւն կմատուցանի, խնդիրների պարզաբանութեան տեսակէտից, միջնակարգ այն դպրոցներում, ուր առանդնում է «քաղաքատնտեսութիւնը»։

Մասնաւոր նշանակութիւն ունեցող մի քանի բառերի բացատրութիւնը, որպէս յաւելուած, աւելորդ չհամարեցինք։

Գրքոյկիս պիտի հետեւի «Դասակարգային կռիւը»։

Ը. ՍԱՊԱԶ—ԳԻԻԼԵԱՆ

25 Հոկտեմբեր, 1906
ՊԱՐԻԶ

ձեռքից, ինչպէս և նա է՝ որ մասնաւորապէս օգտուել է բնական գիտութիւնների արած յառաջադիմութիւնից և նրանց գործնական կիրառութեան արդիւնքից։

Այժմ աւելի ի մօտոյ քննե՛նք այդ ընտրովի խումբը. դիտե՛նք այն դերը, որ նա կատարում է ընկերութեան տնտեսական կեանքի մէջ և վերլուծե՛նք այն հետևանքները, որ այդ տեղից յառաջանում են ընկերութեան նկատմամբ։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ, ՎԱՇԽԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ, ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Երեք տեսակ կապիտալ կայ, — վաճառականների կապիտալ, վաշխառուների կապիտալ և ճարտարագործական կապիտալ։ Այդ երեքից վերջինը կրտսերագոյնն է. նա հազարաւոր դարերի գոյութիւն չունի առաջին երկուսի նման. բայց այդ երեք եղբայրներից կրտսերագոյնը աւելի արագ աճեց, աւելի արագ զարգացաւ՝ քան իր երեց եղբայրները. նա այնպիսի մի հսկայ դարձաւ, որ միւս երկուսին ստրկացրեց և հարկադրեց իր ծառայութեան մէջ մտնելու։

Իր նախնական (դասական) շրջանում փոքր արտադրութիւնը կախումն չունէր վաճառականութիւնից։ Ագարակապանը, գիւղացին և արհեստաւորը՝ եթէ որ և է կարիք ունենային, ուղղակի արտադրողից կստանային արտադրութեան արդիւնքները. բացի դրանից՝ իրենց արտադրութիւնը նրանք ուղղակի կարող էին ծախել սպառողին։ Տնտեսական զարգացման այդ շրջանում վաճառականութիւնը նպաստում էր մասնաւորապէս պերճանքին. այն ժամանակ նա ոչ անհրաժեշտութեան մի առարկայ էր, ոչ արտադրութեան աջակցող և ոչ էլ ընկերութեան օժանդակող։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՍԻՍՏԷՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Կապիտալիստ արտադրութիւնը, սակայն, իր ծագման օրից վաճառականութեան կարիքն է զգում և՝ դրա փոխարէն՝ վաճառականութիւնն էլ կապիտալիստ արտադրութեան կարիքն է զգում իր զարգացման համար։ Որքան որ արտադրութեան կապիտալիստ սիստէմը շատ է ընդարձակւում և որքան նա աւելի բացարձակ իշխանութիւն է ձեռք բերում, այնքան էլ աւելի մեծ պահանջ է զգացւում վաճառականութեան զարգացմանը՝ ամբողջ տնտեսական կեանքի վերաբերմամբ։ Վաճառականութիւնը այսօր այլևս հայթայթիչ միջոց չէ միայն ճոխութեան և պերճանքի։ Արտադրութեան ամբողջ սիստէմը, նոյն իսկ կապիտալիստ երկրում գտնուող ամբողջ ժողովրդի գոյութիւնը, այժմ կախումն ունի վաճառականութեան ազատ և անսանձ գործունէութիւնից։ Եւ սա պատճառներից մէկն է թէ ինչու այժմն պատերազմը աւելի աւերիչ է, քան ե՛րբ և է. թէ ինչու նա խոչնդոտ է լինում վաճառականութեան և համարժէք է դարձել արտադրութեան ընդհատուելուն, տնտեսական կեանքի դադար առնելուն և ճարտարագործական կեանքի քայքայուելուն, մի քայքայում՝ որ ճակատամարտի դաշտից շատ հեռուն է տարածւում և նուազ ազէտալի չէ քան այն աւերումը, որ տեղի է ունենում պատերազմի դաշտի վրայ։

ՎԱՇԽԱՌՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՍԻՍՏԷՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Որքան որ արտադրութեան կապիտալիստ սիստէմի նկատմամբ կարևոր էր վաճառականութեան զարգացումը, նոյնքան էլ կարևոր էր և՝ վաշխառութեան զարգացումը։ Փոքր արտադրութեան օրերում վաշխառուն պարզապէս մի տգրուկ էր, որ ուրիշների թշուառութիւնից կամ անհեռատեսութիւնից օգտւում էր՝ նրանց արիւնը ծծելու համար։ Ուրիշներին փոխ տուած դրամը, սովորաբար, գործ էր ածւում ապարդիւն բաների վրայ։ Օրինակի համար՝ եթէ մի ազնուական դրամ էր փոխ առնում, ապա նա այդ փոխառութիւնը անում էր շուայտութեան մէջ ծախսելու համար. իսկ եթէ դրամ էր փոխ առնում մի ագարակապան, մի գիւղացի, կամ մի գործաւոր, ապա նրանք այդ դրամը փոխ էին առնում գլխաւորապէս իրենց հարկերը կամ կառավարական այլ տուրքերը վճարելու համար. սկզբում և ոչ մէկը դրամական փոխառութիւն էր անում արտադրութեան յատկացնելու նպատակով, — ամէն ոք տէր էր իր սեպհական արտադրութեան գործիքներին, կամ այդ գործիքները ձեռք էր բերում փոխանակութեամբ։ Այդ օրերում դրամական տոկոսը նկատւում էր որպէս անբարոյականութիւն և ամէն տեղ էլ դատապարտւում էր։

Արտադրութեան կապիտալիստ սիստէմի ներքոյ՝ իրերը ուրիշ կերպարանք են առնում։ Դրամը այժմ դառնում է

միջոց կապիտալիստ ձարտարագործութիւն հաստատելու և աշխատանքի ոյժ շահագործելու։ Երբ այսօր մէկ կապիտալիստ դրամ է փոխ առնում՝ որպէսզի մի գործարան կառուցանի կամ արդէն ունեցածը մեծացնի, ապա դրանից չի հետևում — պայմանով որ իր ձեռնարկը յաջողի — թէ իր նախկին եկամուտը կրկնապատկի՝ փոխ առած դրամի տոկոսի պատճառով։ Ընդհակառակը՝ փոխառութիւնը օգնում է նրան աշխատանքի ոյժը շահագործելու, հետևաբար իր եկամուտը և՛ս աւելի մեծ գումարով շատացնելու, աւելի՝ քան այն գումարը, որ նա պիտի վճարէր իբրև տոկոս։ Արտադրութեան կապիտալիստ սիստէմի ներքոյ՝ վաշխառութիւնը կորցնում է իր սկզբնական բնաւորութիւնը։ Իր դերը՝ որպէս միջոց թշուառութեան կամ անհեռատեսութեան շահագործման՝ երկրորդական դծի վրայ է անցնում և առաջին տեղը բռնում է արտադրութեան կապիտալիստ սիստէմի արդիւնաւէտ դարձնելը, «բեղմնաւորելը»։ — այսինքն միջոց դառնալը կապիտալի աւելի արագ զարգացմանը, քան այդ կարելի էր անել, եթէ կապիտալը միայն զիզուած մնար ձարտարագործական կապիտալիստների նկուղներում։ Այդ ժամանակուանից, ահա, դէպի վաշխառուն երբեմնի տածած սոսկումի զգացումը վերջ է գտնում. նա դառնում է մի ամբիծ բնաւորութիւն և ստանում է ԲԱՆԿԻՐ, ԶԵՂՋՈՂ, ՊԱՀԱՆՋԱՏԻՐ նոր ու քաղցրահնչիւն անունները։

Այս կերպարանափոխութեան հետ միատեղ, տոկոսաբեր կապիտալի գլխաւոր ընթացքը մի զարմանալի փոփոխութիւն կրեց։ Դրամները, որ վաշխառուները զիզել էին իրենց նկուղների մէջ, հազարաւոր խողովակների միջոցով առաջ դուրս էին թափւում այդ աւազանից և լցւում ոչ-կապիտալիստների ձեռքի մէջ։

Այսօր, ընդհակառակը, վարկի հաստատութիւնները, որ վաշխառուների նախկին նկուղներն են, դարձել են մի մի աւազաններ, որոնց մէջ հազարաւոր խողովակներով դրամներ են թափւում ոչ-կապիտալիստների ձեռքից. և այդ աւազաններից թափուած դրամները դուրս գալով՝ ուղղւում են կապիտալիստներին։ Ճիշդ ինչպէս որ առաջ էր, այսօր էլ վարկը մի միջոց է ոչ-կապիտալիստներին — սեպհականատէր կամ ոչ-սեպհականատէր — տոկոս հատուցանող դարձնելու. այսօր, սակայն, վարկը աւելի մեծ չափով մի գործիք է դարձել և

Նրանով զանազան դասակարգի ոչ-կապիտալիստների ձեռքի մէջ գտնուող սեպհականութիւնը կապիտալի է վերածւում. սկսած նպաստընկալ հաստատութիւնների ընդարձակ կալուածներից մինչև սպասուհիների և վարձագնով աշխատողների խնայած լումաները։ Ուրիշ խօսքով՝ նա գործիք դարձաւ խորտակելու առաջինը և ուժգնօրէն շահագործելու վերջինը։ Հասարակ ժողովուրդը ջատագովում էր վարկի, խնայողական բանկերի, և այլն, ներկայ հաստատութիւնները, այն հիմամբ թէ՝ ինչպէս որ այդ ասում են ընկերային ներկայ կարգերի պահպանման համար գովասանք շռայլողները՝ դրանք գործաւորների, սպասուհիների և ագարակապանների փոքրիկ խնայողութիւնները կապիտալի են վերածում ու այդ դժբախտներին էլ «կապիտալիստներ» դարձնում։ Սակայն ոչ-կապիտալիստների դրամները հաւաքելու միակ նպատակն է կապիտալի մի յարաձուն քանակութիւն դնել կապիտալիստների տրամադրութեան ներքոյ, որպէսզի փոխառութիւններ տալու ձևին տակ կապիտալիստները կարողանան իրենց գործերը «բարւոքել» և արտադրութեան կապիտալիստ սիստէմի զարգացումը արագացնել։ Իսկ այդ հանգամանքը ինքնին նշանակում է կործանումն վարձագնով աշխատողների, փոքր ագարակապանների, գործաւորների և փոքր արտադրողների ու մանր վաճառականների։ Որքան որ արտադրութեան կապիտալիստ սիստէմը զարգանում է, այնքան էլ ցած է իջնում փոքր մարդը, այնքան էլ աւելի տեղահան են լինում գործաւորները և այնքան էլ վատթարանում է գործաւոր դասակարգի դրութիւնը։ Մի խօսքով՝ պրոլետարիատ դասակարգը ուռչում, ստուարանում է։

ՎԱՐԿԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ (բանկերի) ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՍԻՍՏԷՄԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Այն ժամանակ, երբ վարկի ներկայ հաստատութիւնները նպատակ ունեն ոչ-կապիտալիստների ամբողջ սեպհականութիւնը կապիտալ դարձնելու և կապիտալիստ դասակարգի տրամադրութեան ներքոյ դնելու, նոյն այդ ժամանակ պարզ երևում է, որ կապիտալիստ դասակարգի կապիտալն էլ աւելի՛ օգտաւէտ կերպով է գործ ածւում քան առաջ։ Վարկի հաստատութիւնները աւազաններ են եղած այն դրամների, որ

անհատական կապիտալիստները երբեմն առիթ չեն ունենում գործածելու, և ահա այդ դրամները, որ այլապէս « մեռած » պիտի մնային, վարկի հաստատութիւնների կողմից դրւում են կարիք ունեցող կապիտալիստների տրամադրութեան ներքոյ։ Բացի դրանից՝ վարկի հաստատութիւնները հնարաւորութիւն ունեն դեռ չծախուած ապրանքը դրամ դարձնել ու այդպիսով դրամ-կապիտալի քանակութիւնը նուազեցնել՝ մի որևէ գործի ձեռնարկ եղած ժամանակին։

Այս բոլոր միջոցներով կապիտալիստ դասակարգի տրամադրութեան ներքոյ գտնուող կապիտալի քանակութիւնը և դժը անհունապէս աճել է։ Այդ տեղից էլ յառաջ է եկել և այն, որ այժմ վարկը կապիտալիստ արտադրութեան սիստէմի ամենազօրաւոր լծակներից մէկն է դարձել։ Մրքենայականութեան մեծ զարգացումից և անգործների պահեստի բանակի ստեղծումից յետոյ — որին կապիտալիստ դասակարգը աճպարարութեամբ գոյութիւն է տալիս, որպէսզի գործ ունեցողներին մոքի զեկավարելի շրջանակի մէջ դնի — վարկը գլխաւոր պատճառն է այն արագութեան, որով յառաջ է տարւում արտադրութեան ներկայ սիստէմը և որը նորագոյն արտադրութեան միջոց է տալիս — լինի ճարտարագործական կամ երկրագործական — մեծապէս ծաւալ առնելու ու զարգանալու, այնպէս որ ամենափոքր ճնշումն իսկ ազդեցութիւն ունի վարկի վրայ։

Սակայն վարկը աւելի շուտ է ազդւում որ և է խառնաշփոթութիւնից, քան վաճառականութիւնը։ Վարկի ստացած ամէն թեթև հարուած իր ազդեցութիւնը ունի տնտեսական ամբողջ մարմնի վրայ։

Կարծեցեալ շատ տնտեսագէտներ վարկը համարել են որպէս միջոց, որով սեպհականութիւն չունեցող կամ շատ փոքր սեպհականութիւն ունեցող մարդիկ կարող են կապիտալիստ դառնալ։ Բայց ինչպէս որ անունը ինքնին ցոյց է տալիս, վարկը հաստատուած է տուողի ունեցած վստահութեան վրայ՝ ստացողի նկատմամբ։ Որքան որ մէկը շատ վարկ ունենայ, այնքան էլ աւելի կլինի նրա տուած ապահովութիւնը, ուստի և աւելի էլ՝ նրա վայելած վարկը։ Հետևաբար, վարկը միայն մի միջոց է իրենց ունեցածից աւելի շատ դրամ մատակարարելու կապիտալիստներին և դրանով զօրեղացնելու նրանց գերակշռութիւնը ու աւելի սուր դարձնելու ընկերային հա-

կամարտութիւնները, փոխանակ թուլացնելու կամ արմատախիլ անելու։ Ամէնը մէկտեղ ամփոփելով՝ վարկը ոչ միայն մի միջոց է աւելի արագ զարգացնելու արտադրութեան կապիտալիստ սիստէմը և նրան հնարաւորութիւն տալու ամէն նպաստաւոր պատեհութիւնից օգտուելու, այլ նա մի միջոց է և՝ փոքր արտադրութեան, մանր վաճառականութեան տապալումը յառաջ բերելու. բայց վերջին (թէև ոչ նուազ) և բաւականին նշանակալից հանգամանքն էլ այն է, որ վարկը մի միջոց է նորագոյն ճարտարագործութեան գապանակները աւելի ու աւելի բարդ դարձնելու և ընդունակ ամէն տեսակ շփոթութիւններից ազդուելու ու անապահովութեան զգացումը տանելու մինչև նոյն իսկ իրենց՝ կապիտալիստների շարքերը հասցնելու և այդպիսով աւելի երերուն դարձնելու այն հողը, որի վրայ որ նրանք կանգնած են։

ԳԼՈՒԽ Բ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՒ ՄՐՑՈՒՄԸ

Երբ մի կողմից ճարտարագործական զարգացումը աշխատում է վաճառականութիւնը և վարկը աւելի սերտ կերպով կապել ճարտարագործութեան հետ, միւս կողմից էլ այդ հանգամանքից յառաջանում է և՛ այն հետեւանքը, որ՝ շնորհիւ աշխատանքի բաժանման, կապիտալիստի կատարած զանազան պաշտօնները հետզհետէ աւելի ու աւելի ստորաբաժանումներ են ընդունում և որոնցից ամէն մէկը կարիք է զգում զատ ձեռնարկների և զատ հաստատութիւնների։ Առաջ՝ վաճառականի գործը ոչ միայն ապրանքներ գնել և ծախել էր, այլ նրա գործն էր, նոյնպէս, իր ապրանքները տանել շատ հեռաւոր վաճառանոցներ։ Նա ինքն էր որ պիտի ջանար իր ապրանքները բազմատեսակ դարձնել և աշխատել մատչելի անել բոլոր անհատական գնողներին։ Այսօր, սակայն, աշխատանքի բաժանումն կայ ոչ միայն մեծաքանակ և փոքրաքանակ վաճառականութեան մէջ, այլ կան ընդարձակ հաստատութիւններ, որոնք զբաղւում են տեղափոխութեամբ և ապրանքների մթերումով։ Կենդրոնական մեծ վաճառանոցներում, որ կոչւում են սակարանէր, ծախելը և գնելը այն աստիճան տարբեր և անկախ գործեր են դարձել բոլոր այն զբաղումներից, որոնք մի ժամանակ վաճառականին էին պատկանում, որ հեռաւոր երկրներում գտնուող ապրանքները կամ նոյն իսկ դեռ չարտադրուածները ոչ միայն այդ տեղերում գնւում և վաճառւում են, այլ ապրանքները գնւում են՝ առանց որ գնողը գիտաւորութիւն ունենար այդ ապրանքները իր ձեռքին մէջ ունենալու, ինչպէս և շատ ապրանքներ էլ ծախւում են, առանց որ վաճառողը այդ բոլորը իր ձեռքին մէջ արդէն ունեցած լինէր։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԷՋ

Նախկին ժամանակներում կապիտալիստը միշտ իր ձեռքի տակն ունէր մի մեծ դրամարկղ, որի մէջ լցնում էր իր բոլոր դրամները և այնտեղից էլ վեր էր առնում այն բոլոր դրամագլուխները, ինչքանի որ կարիք ունէր իր վճարումները կատարելու համար։ Այսօր, ճարտարագործական բոլոր յառաջադէմ երկրներում, մասնաւորապէս Անգղիայում և Ամերիկայում, կապիտալիստի գանձարանը բոլորովին տարբեր մի զբաղում է դարձել։ Հիմա ծնած է բանկը։ Վճարումները այլևս ոչ թէ կապիտալիստին են տրւում, այլ նրա բանկին, և կապիտալիստի պարտքերը ոչ թէ իրենից են ստացւում, այլ իր բանկից գանձւում. այժմ այնպէս է դարձել, որ ամէն երկրում փոքրաթիւ կենդրոնական հաստատութիւններ իրենց ձեռքն են առել այդ երկրի բոլոր կապիտալիստ դասակարգի գանձային գործը։

Թէև այս կերպով կապիտալիստների շատ զբաղումներ (պաշտօններ) տարբեր հաստատութիւնների զբաղումներ են դարձել, սակայն նոյն այդ զբաղումները մէկը միւսից բոլորովին անկախ չեն, անկախութիւնը միայն երևութական է և իրաւական. այդ բոլոր զբաղումները սերտ կերպով իրարու հետ տնտեսապէս կապուած են և մէկը միւսից շատ մեծ կախում ունի։ Այնպէս որ այդ հաստատութիւններից մէկի զբաղումները չեն կարող յարատեւօրէն շարունակուիլ, եթէ նրանց հետ գործ ունեցողների զբաղումները դադար առնեն։

Որքան որ վաճառականութիւնը, վարկը և ճարտարագործութիւնը իրարուց աւելի կախում են ունենում և որքան որ կապիտալիստ դասակարգի զանազան զբաղումները տարբեր տարբեր հաստատութիւնների գործեր են դառնում, այնքան էլ աւելի մեծ է դառնում մէկ կապիտալիստի կախումը միւսից։ Հետևաբար՝ կապիտալիստ արտադրութիւնը հետզհետէ դառնում է այնպիսի հսկայական մի մարմին, որի զանազան մասերը միշտ սերտ յարաբերութեան մէջ են լինում իրարու հետ։ Ուրեմն, որքան որ ժողովրդական զանգուածները հետզհետէ աւելի մեծ կախում են ունենում կապիտալիստներից, նոյնպէս էլ իրենք կապիտալիստները հետզհետէ աւելի մեծ կախում են ունենում իրարուց։

Արտադրութեան նորագոյն սիստէմի տնտեսական յօրինուածութիւնը հետզհետէ փափուկ և բարդ մի մեխանիզմ է դառնում, որի գործունէութեան անսայթաքութիւնը կախում է ունենում իր անհամար մասունքների ուղիղ գործադրութիւնից և ամէն մէկի իր դերի մէջ ունեցած փոխադարձ ճշդապահութիւնից։

Արտադրութեան ոչ մի սիստէմ, ոչ մի ժամանակ, այնպէս կարիք չի ունեցել ուղիղ կանոնաւորման, ինչպէս որ այդ ներկայումս է։ Մինչդեռ իրականութեան մէջ շատ ճարտարագործութիւններ աւելի ու աւելի կախումն են ունենում մէկը միւսից, սակայն դրա հետ միասին, օրէնքի տեսակէտով, նրանք միշտ իրարուց անկախ են մնում։ Ամէն տեսակ ճարտարագործութեան արտադրութեան միջոցները մասնաւոր սեպհականութիւն են, հետևապէս սեպհականատէրը կարող է նրանց հետ վարուել այնպէս, ինչպէս որ ինքը կցանկանայ։

ԱԶԱՏ ՄՐՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԷՋ

Որքան որ մեծ արտադրութիւնը աւելի շատ է զարգանում, որքան որ աւելի է ընդարձակւում ամէն առանձին ճարտարագործութիւն, այնքան աւելի ճշգիւ է որոշւում ամէն մէկի տնտեսական գործունէութեան շրջանակը և այնքան էլ աւելի ճիշդ և ուղիղ է կատարւում յղացողը և գործադրողը յատակագիծը՝ մինչև իր ամենափոքր մանրամասնութիւնները։ Սակայն, դրանից դուրս, զանազան ճարտարագործութեանց միացած գործունէութիւնը թողնուած է ազատ մրցման խթանին. իսկ այդ մրցումը կատարւում է թէ՛ ի զուր վատնելով ահագին ոյժ և նիւթ, և թէ՛ յառաջ բերելով տնտեսական այնպիսի հարուածներ, որոնք կոչւում են տագնապներ (կրիզիսներ). որքան որ տնտեսական տագնապները, մի որոշ ժամանակամիջոցում, բուռն կերպարանք են ընդունում, բայց յետոյ էլ այն աստիճան պարբերական են դառնում, որ այլևս դադարում են առանձին ուշադրութեան առարկայ լինելուց. այդ ազատ մրցումն է որ տնտեսական մեխանիզմը շարժման մէջ է դնում։ Բայց այդ շարժումը կատարւում է ոստիւններով և դահավիժումներով։ Մրցման գործունէութիւնը այնպէս է յառաջ գնում, որ ոչ թէ նա իւրաքանչիւրին իր պատշաճաւոր տեղն է գնում, այլ ճգմում է ամէն մէկին, որ իրեն է զիմադրաւում։ Եւ դա է որ կոչւում է «յարմարագոյնների ընտրութիւնը գոյութեան կռուի մէջ»։ Սակայն իրողութիւնը այն է, որ մրցումը երբէք չի ճգմում իրապէս անյարմարին, ինչպէս և նա չի ուղղում սխալ տեղ կանգնողին ու բոլոր այն մարդոց, ովոնք չունեն մասնաւոր յատկութիւններ կամ, ինչ որ ամենակարևորն է, չի ոչնչացնում նրանց, որոնք վերապրելու անհրաժեշտ կապիտալ չունեն։ Հետևաբար մրցումը երբէք չի ջախջախում նրանց, որոնք անհամապատասխան են «գոյութեան կռուի» համար։ Կապիտալիստական ամէն մի հաստատութեան անանկացումը իր յետևից բերում է քայքայումն անթիւ մարդոց, որոնք իր հետ տնտեսական յարաբերութեան մէջ էին. — որպիսին են վարձագնով աշխատողները, պահանջատէրերը, և այլն։

«Ամէն մարդ իր սեպհական բախտի տէրն է», այս է սովորական դարձած առածը, որ մեզ ժառանգութիւն է մնացած փոքր արտադրութեան օրերից, երբ իր օրապահիկը աշխատողի, ինչպէս և նրա ընտանիքի, ճակատագիրը կախումն ունէր իր անձնական յատկութիւններից։ Այսօր կապիտալիստ համայնքի ամէն անդամի բախտ շատ քիչ կախումն ունի իր անհատականութիւնից, այլ նա աւելի ու աւելի կախումն ունի հազարաւոր այնպիսի հանգամանքներից, որոնք իր վերահսկողութիւնից դուրս են։ Մրցումն այլևս չի յառաջացնում յարմարագոյնների վերապրելը։

ԳԼՈՒԽ Գ.

ՇԱՀ

Կապիտալիստ դասակարգը ո՞րտեղից է դուրս բերում իր եկամուտը։ Սկզբում վաճառականներէ և վաշխառուներէ կապիտալի շահը կազմում էր այն բաժիններից, որ նրանք ստանում էին այն մարդոց ռեմնանտներէն, որոնք կամ իրենց պերճանքի և կամ թշուառութեան մէջ եղած իրենց մէկ պէտքին բաւականութիւն տալու համար կարիք էին զգում դիմելու այդ վաճառականներին և վաշխառուներին։ Բոլորովին այլ է ճարտարաբարձական կապիտալի ընթացքը։

ԹԷ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ Ի՛ՆՉ ԿԵՐՊՈՎ Է ԻՐ ՇԱՀԸ ՔԱՄՈՒՄ ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՑ

Կապիտալիստ դասակարգը արտադրող մի գործ չի կատարում։ Այդ բանը անում են վարձագնով աշխատողները։ Բայց վարձագնով աշխատողը չի արտադրում իր համար. նա այդ չի կարող անել։ Ամէն ինչ, որ այսօր անհրաժեշտ է արտադրութեան համար — հող և կապիտալ — մասնաւոր սեպհականութիւն է, համեմատաբար, փոքրաթիւ մարդոց։ Պրոլետարը, որ չունի դրանցից և ոչ մին, պէտք է կամ սովամահ լինէ, կամ իր ունեցած միակ ինչքը՝ աշխատանքի ոյժը՝ ծախի այն անձին, որ կուզի գնել։ Այդ անձնաւորութիւնը կապիտալիստն է։ Երբ կապիտալիստը ծախու է առնում մի պրոլետարի աշխատանքի ոյժ և այդ կերպով այս վերջինս դարձնում է վարձագնով աշխատող, նա այդպէս է անում՝ համոզուած լինելով որ աշխատողը իր ստացած վարձից աւելի կարտադրի։ Եթէ աշխատողը արտադրէր միայն իր ստացածին չափ — և դեռ վատթարագոյնը՝ եթէ նա իր ստացածից նուազ արտադրէր — այն ժամանակ կապիտալիստը նրան չէր գործածի, չէր ուզիլ գնել նրա աշխատանքի ոյժը, չէր ցանկանալ պահել նրան՝ որպէս վարձագնով աշխատող։ Կապիտալիստի գործածած պրոլետարը՝ վարձագնով աշխատողն է հարստութիւն, ապրանք արտադրողը։ Վարձագնով աշխատողի արտադրած հարստութեան կոյտից կապիտալիստը վեր է առնում մի մասը, ոչ

Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI--1922
Անվանական, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

աւելի քան հապիւ մէկ քառորդը. և այդ մասը վերադարձնում է վարձագնով աշխատողին՝ իբրև վճար նրա աշխատանքի ոյժի, որպէս նրա վարձքը։ Վարձագնով աշխատողի արտադրած հարստութեան աւելացած մասը, մնացած երեք քառորդը, եթէ ոչ աւելին, յաւելեալ-արժէք է, — այսինքն գործաւորի արտադրած հարստութեան այն քանակութիւնն է, որ աւելացել էր նոյն այդ գործաւորի վատնած ոյժերը վերակազմելու համար պէտք եղած մասը վճարելուց յետոյ։ Այդ յաւելեալ-արժէքը կապիտալիստը պահում է իր համար և նա այդ համարում է շահ, որը և կազմում է իր եկամուտը։ Հետևաբար, ճարտարագործական կապիտալը իր շահը թխում, քամում է՝ շահագործելով վարձագնով աշխատող սեպհականազուրկներին։

Սակայն, որքան որ արտադրութեան կապիտալիստ սիստէմը զարգանում է, այնքան էլ կապիտալի ճարտարագործական ձևը տիրապետում է բոլոր միւսներին և ստիպում է նրանց իր ծառայութեան մէջը մտնելու, իրեն հետևելու. բացի դրանից կայ և՝ այն, որ այդ էվոլիւցիան չէր կարող առաջ երթալ, մինչև որ կապիտալիստները վարձագնով աշխատողին չվերադարձնէին, մի կամ միւս եղանակով, (անձնական ծառաների թիւը աւելացնելով՝ օրինակ, սպասաւորների, պահապանների, և այլն. «բարեգործական» անուանուած հաստատութիւններով և այլ միջոցներով) յաւելեալ-արժէքի մի մասը, որ նրանք յափշտակել էին նոյն այդ գործաւորից։ Իբրև հետևանք բոլոր այս պատճառների՝ պրոլետարի արտադրած յաւելեալ-արժէքն է դառնում այն մշտական միակ աղբիւրը, որտեղից ամբողջ կապիտալիստ դասակարգը իր եկամուտն է քաշում, դուրս բերում։

Ինչպէս որ փոքր արհեստաւորը, գիւղական փոքր հողատէրը և փոքր ագարակապանը անհետանալու վրայ են և նրանց ազդեցութիւնը հետզհետէ նուազում է նորագոյն ընկերութեան վրայ, նոյնպէս էլ չքանալու վրայ են վաճառականների և վաշխառուների կապիտալի հին ձևերը, որոնցից երկուսն էլ իրենց շահերը դուրս էին քաշում ոչ-կապիտալիստ դասակարգերին շահագործելով։ Արդէն շատ ազգեր կան առանց արհեստաւորների, գիւղական փոքր հողատէրերի և փոքր ագարակապանների։ Անգլիան աչքառու մի օրինակ է դրան։ Բայց ոչ ոք կարող է ըմբռնել նորագոյն մի պետութիւն՝

1003/11954
100023-11

առանց մեծ արտադրութեան։ Ով որ ցանկանում է կապիտալի նորագոյն ձևերը հասկանալ, պէտք է սկսի կապիտալի ընդունած ճարտարագործական ձևից։ Աղբիւրներից իրականը և ամենանշանաւորը՝ որտեղից յառաջանում են բոլոր կապիտալիստների շահերը, պիտի որոնել այն յաւելեալ-արժէքի մէջ, որ թիսսումէ կապիտալիստ ճարտարագործութիւնը։

ԹԷ ԻՆՉՈՒ ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՑ ՎԵՐ ԱՌՆՈՒԱԾ ՅԱՒԵԼԵԱԼ-ԱՐԺԷՔԸ ՅԱՐԱՏԵՒՈՐԷՆ ԱՃՈՒՄ Է

Պրոլետարիատն է արտադրում այն յաւելեալ-արժէքը, որ ճարտարագործական կապիտալը իւրացնում է։ Շնորհիւ գործաւորների ուսերի վրայ դրուած աշխատանքի չարատանջ բեռան աճեցմանը, շնորհիւ աշխատանք-խնայող մեքենաների ներմուծմանը, շնորհիւ աշխատանքի ոյժի էժանանալուն, և այլն, և այլն, այդ յաւելեալ-արժէքը յարատեւօրէն շատանալու վրայ է։ Կապիտալիստ սիստէմի արտադրութեան զարգացման հետ միասին, բազմանում է թիւը և՛ շահագործուող պրոլետարների ու, իբրև անխուսափելի հետեւանք դրան, կապիտալիստ դասակարգի ձեռքը հոսող յաւելեալ-արժէքի քանակութիւնը հետզհետէ աւելի ու աւելի է շատանում։ Սակայն, գժբախտաբար, «կեանքի անխառն վայելումը մահկանացու մարդի բաժինը չէ»։ Որքան որ իր համար ստելի լինի գործողութիւնը, այնու ամենայնիւ կապիտալիստը ստիպուած է «բաժանել»։ Կալոռաժապէրը և Պերոռինը կամ Կառալբոռինը երկուսն էլ յառաջ են գալիս և իրենց բաժինը պահանջում. իսկ կապիտալիստ դասակարգը հարկադրուած է նրանց հետ բաժանել՝ գործաւորներից յափշտակելով քաւած յաւելեալ-արժէքը։

ԳԼՈՒԽ Դ.

ԿԱԼՈՒԱԾԱՀԱՍ

Երբ խօսւում է այն դասակարգերի մասին, որոնք արտադրէն դառնում են միակ սեպհականատէրերը և շահագործողները՝ հետեւաբար և արտադրութեան գործիքների մենավաճառները, ապա տարբերութիւն պիտի դնել կապիտալիստներէ և դէպ կալոռաժապէրէրէ միջև ու, բացի դրանից, փոքր հողատէրի մասին խօսել որպէս կալուածատիրոջ, դա նոյնքան սխալ կլինէր, որքան փոքր կապիտալիստի վրայ նայելը՝ ինչպէս իսկական կապիտալիստի։ Արտադրութեան կապիտալիստ սիստէմը արտադրէն ոչնչացնում է վերջին երկու տեսակ փոքր սեպհականատէրերին և ամէն արժէքաւոր սեպհականութիւն, որ դեռ քարշ է գալիս փոքր մարդի ձեռքում՝ հետզհետէ կեդրոնացնում է շատ քչերի ձեռքում։

Հողը արտադրութեան մի առանձին միջոց է. նա «Էնիգ անհրաժեշտն է. առանց նրան մարդկային գործունէութիւն կարելի չէ. նոյն իսկ նաւորդը և օդագնացը կարիք ունեն հողի՝ մեկնման տեղի և ցամաք ելնելու համար։ Բացի դրանից՝ նա արտադրութեան այնպիսի միջոց է, որ չէ կարելի աճեցնել «ուղղաձիգ պէս։ Այս բոլորի հետ նկատողութեան պիտի առնել և՛ այն, որ տակաւին ոչ մի պետութիւն կայ, որի հողի ամբողջ տարածութիւնը իրապէս բռնուած լինէր և բնակչութիւնից էլ օգտակարապէս մշակուած. նոյն իսկ Չինաստանում, չնայելով իր բնակչութեան խտութեանը և նախնականութեանը, դեռ ահագին տարածութեամբ չբռնուած հողեր կան։

Երբ միջնադարեան Եւրոպայում դեռ գիւղական մանր հողատիրութիւնն էր տիրապետողը, այն ժամանակ ամէն գիւղացի ունէր իր սեպհական հողը և տուն ու տեղը։ Ջրերը, անտառները և արօտատեղիները համայնքի սեպհականութիւնն էին և անմշակ հողերի այնքան ընդարձակ տարածութիւններ կային, որ ոչ մէկը չէր ուզիլ դիպչիլ մի ուրիշի մշակած հողի կտորին, բայց ժամանակի ընթացքում յառաջ եկաւ ապրանքային արտադրութիւնը, որի հետեւանքները արդէն ծանօթ են։ Երկրագործական արտադրութիւնները դարձան ապրանքներ և ունեցան արժէք։ Իսկ դա հակադրեց հողի վրան, որ այնուհետեւ դարձաւ գին ունեցող մի ապրանք՝ հարստութիւն։

կեանքի և արտադրութեան համար ամենաանհրաժեշտ մի գործիք, որպիսին է հողը, ի հարկէ տեսականապէս գերակշիռ և անդիմադրելի ոյժ պիտի տար նրան, որի մասնաւոր սեպհականութիւնը կը լինէր։ Իրերի այդ արտաքին երևոյթին ենք պարտական այն հայեացքը, որ քննադատութիւնից դուրկ մի քանի խակ մտքերի պաշարել է, որոնք կարծում են թէ ներկայ բոլոր թշուառութեանց միակ աղբիւրը հողի մասնաւոր սեպհականութիւնն է. թէ միայն կալուածատէրն է, որ ծծած է աշխատանքի և կապիտալի յարաճուն արգասաբերութիւնը. ուստի եթէ կալուածատէրը սեպհականաղրկուի ու հեռացնուի կամ նրա թևերը կարատուին, այն ժամանակ ժողովրդին կվերադառնայ — թէ կապիտալիստներին և թէ գործաւորներին — ստեղծուած հարստութեան եթէ ոչ ամբողջական, գէթ մի խոշոր մասը, որ այժմ ուղղակի կամ անուղղակի խլւում է նրանցից։ Իրերի վրայ ունեցած այս հայեացքը պարզ ցոյց է տալիս թէ ի՞նչ կուրութիւն է տիրում արտադրութեան կապիտալիստ սիստէմի նշանակութեան նկատմամբ և թէ ո՞րքան սխալ են ըմբռնում ընկերային էվոլիւցիան, որ թագնուած է նրա տակը։

ՄԻԱՀԱՐԿ ՏԵՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՆՔԸ

Կապիտալիստի դէպի կալուածատէրը ունեցած յարաբերութիւնը նոյնը չէ, ինչ որ գործաւորինը՝ դէպի կապիտալիստը։ Ուրիշ խօսքով՝ կապիտալիստը պէտք չունի «կանգնելու և յանձնելու» կալուածատիրոջը։ Անցան այն օրերը, երբ «սպիտակ հովանոցը և ամբարհաւաճութիւնից խենթացած փիղերը հողային պարգևի մի մի ծաղիկներ էին»։ Իրերի այդպիսի դրութիւն գոյութիւն ունէր արտադրութեան նախկին սիստէմի ժամանակ, և այնպիսի մի երկրում, ինչպիսին էր Հնդկաստանը. բայց նոյն իսկ այնտեղ իրերը այժմ կորցնում են իրենց նախնական բնաւորութիւնը։ Հակառակ այն բոլորին, ինչ որ կալուածատիրութիւնը կարող էր անել և արաւ, արտադրութեան կապիտալիստ սիստէմի զարգացումը մի ախոյեան մեքենայեց նախկին օրերի կալուածատիրոջ և ընկերային առաջուայ սիստէմի դէմ, — դա է կապիտալիստը։ Կապիտալիստի ունեցած ոյժը առ նուազն նրան հաւասար է դարձնում կալուածատիրոջը. երկուսն էլ կարող են վարուիլ որպէս սեպուհներ, տէրեր. և

կապիտալի լիակատար զարգացումով, իշխանական գայիսոնը՝ որ առաջ բացառապէս գտնւում էր կալուածատէր դասակարգի ձեռքը՝ հետզհետէ սկսում է անցնել միատեղ թէ՛ կալուածատիրոջը և թէ՛ կապիտալիստին, միանգամայն յայտնի դարձնելով այն յարաճուն միտումը, որ ապագային միայն կապիտալիստը պիտի լինի այդ գայիսոնը տիրողը։ Կալուածատիրոջ ոյժը առաւել կամ նուազ է, նայելով կալուածատէրերի թուի սակաւութեանը, ինչպէս և աւելի կամ պակաս՝ այն դիւրութեանը, որ օրէնքները տալիս են հողի վաճառման համար։ Անգլիայում այս երկու հանգամանքները մեծապէս նպաստում են հողային մենավաճառի ոյժը ամրապնդելուն։ Միացեալ-Նահանգներում կապիտալիստի և կալուածատիրոջ մակդիրները սովորաբար խառնւում են միևնոյն անձի մէջ։ Տարագործը, ընդհանրապէս, սեպհականատէր է այն հողին, որի վրայ որ կառուցած է իր գործարանը. հանքային ընկերութիւնը, սովորաբար, տէր է իր սեպհական հանքերին. և երկրագործութեան սահմանի մէջ, ուր արտադրութեան կապիտալիստ սիստէմը այժմ իր լիակատար փթթումի մէջն է, մեծահասոյթ ագարակի հողը սեպհականութիւն է նոյն այդ հողը մշակող կապիտալիստ-ձեռնարկողին։ Այս բոլորի մէջ աչքից բաց չպէտք է թողնել այն հանգամանքը, որ երբ կապիտալիստը ինքնին մի կալուածատէր է և գործում է իր սեպհական հողի վրայ, ապա նա դրանով խոյս չի տալիս իր յաւելեալ-արժէքը բաժանելուց կալուածատէր դասակարգի հետ։ Տասից հինը դէպքում, կամ նոյն իսկ աւելի մեծ համեմատութեամբ, այդպիսին կալուածատէր է դարձել նախորդ սեպհականատիրոջը դրամի մի կլորակ գումար վճարելով։ Տարեկան այն տոկոսը, որ կապիտալիստը ուրիշ կերպով պիտի հանէր վճարուած այդ արժէգնից, ներկայացնում է այն կալուածահասը, որ նա վճարում է կալուածատիրոջը. — դա յաւելեալ-արժէքի այն մասն է, որ նա քամելով հանում է աշխատանքից և հարկադրուած է բաժանելու կալուածատէր դասակարգի հետ։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ՀԱՐԿԱԴԻՐՈՒԱԾ ԵՆ ԿԱԼՈՒԱԾԱՏԷՐԵՐԻ ՀԵՏ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԱՅՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՆՐԱՆՔ ՎԵՐ ԵՆ ԱՌՆՈՒՄ ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՑ

Արժէգինը կամ կալուածահասը, ինչպէս որ հանգամանքը կարող է բերել, որ կապիտալիստը վճարում է իրեն պէտք

եղած հողի համար, իր յաւելեալ-արժէքի այն կտորն է, որ նա հարկադրուած է «ողջոյն» բաժանելու կալուածատիրոջ հետ։ Բայց կալուածատէր դասակարգը կողջոյնի կերպով էլ է իւրացնում հարստութեան շատ նշանաւոր մասեր, որոնք այլապէս պիտի երթային կապիտալիստ դասակարգին։ Դա այսպէս է պատահում։

Կապիտալիստի շահը, ինչպէս մի քիչ վերև ցոյց տրուեցաւ, հարստութեան այն մասն է, որ աշխատանքը արտադրել էր և կապիտալիստը իւրացրել, դուրս հանելուց յետոյ այն փոքր գումարը, որ նա վերադարձրել էր վարձագնով աշխատողին՝ իբրև վարձագին, որպէսզի դրանով միջոց տար գործաւորին ապրելու, աշխատելու և սերունդ արտադրելու։ Դրանից հետևում է այն՝ որքան որ մեծ լինի այն բաժինը, որին կարիք ունի վարձագնով աշխատողը ապրելու, գործելու և սերունդ արտադրելու, ապա այնքան էլ աւելի քիչ կլինի շահ կոչուած այն բաժինը, որ կապիտալիստը կարող էր յափշտակել և դրա հակառակը՝— որքան որ աւելի քիչ լինէր այն բաժինը, որին կարիք ունենար վարձագնով աշխատողը ապրելու, գործելու և սերունդ արտադրելու, ապա այնքան էլ աւելի շատ կլինէր շահ ասուած այն բաժինը, որ կապիտալիստը կարող էր յափշտակել։ Ինչ որ կպակասեցնի ապրելու գինը — արժանագին ապրանք, արժանագին տնավարձ, և այլն — ապա նա կցածրացնի և՛ վարձագնի քանակութիւնը, որ բացարձակապէս անհրաժեշտ էր վարձագնով աշխատողին, ու այն ժամանակ նրա վարձագինը կսկսի վար իջնել և նրա արտադրած հարստութեան այն բաժինը, որ կապիտալիստն էր յափշտակել իբրև շահ, կմիտի աւելի բարձրանալ։ Դրա հակառակը՝ ինչ որ կբարձրացնի ապրելու գինը — սուղ ապրանք, բարձր տնավարձ — ապա նա կբարձրացնի և՛ վարձագնի քանակութիւնը, որ բացարձակապէս անհրաժեշտ էր վարձագնով աշխատողի համար։ և որովհետև այն ժամանակ իր վարձագինը կբարձրանայ, ուստի կապիտալիստի կողմից որպէս շահ յափշտակուած՝ նրա արտադրած հարստութեան բաժինը ըստ այնմ էլ կմիտի նուազել։ Արդ, այժմ կենսական անհրաժեշտ պիտոյքների գները իջնում են շնորհիւ այն յարաճուն քանակութեան, որ կատարելագործուած մեթոդները թոյլ են տալիս արտադրելու։ Այդ միտումը պիտի նկրտէր իջեցնել վարձագնների այն քանակութիւնը՝ որ վարձագնով

աշխատողը կպահանջէր. ուրեմն վարձագինը պիտի ցածրանար և ըստ այնմ էլ պիտի աւելանար կապիտալիստի ձեռքի մէջ թողնուած շահի բաժինը։ Բայց արժանագին ապրանքների ազդեցութիւնը վարձագնների վար իջնելու միտումի և շահի բարձրացման միտումի վրան կասեցնում է կեանքի անհրաժեշտութիւններից մէկի գնի բարձրացումովը, — այն է քաղաքային հողի։ Ճակատագրի մի հեգնութիւնն, է որ արտադրութեան կապիտալիստ սիստէմի ազդեցութիւններից մէկն էլ է ժողովրդին — պրոլետարներին — խոնել քաղաքների մէջ և դրանով բարձրացնել կալուածահասը, որ վարձագնով աշխատողը պէտք է վճարէր ու այդպիսով յայտնի աստիճան կպակասեցնէր յափշտակուած վարձագնի այն բաժինը, որ կապիտալիստը կարող էր խլել որպէս շահ։ Այդ յարաճուն կալուածահասը, որ վարձագնով աշխատողը վճարում է կալուածատէր դասակարգին, այն բաժինն է՝ որից կողջոյնի կերպով զրկւում է կապիտալիստ դասակարգը։ Հարստութեան այն քանակութիւնը, որ կալուածատէրը կարող է իւրացնել կապիտալիստ դասակարգից, այնքան աւելի շատ է դառնում, որքան որ շատանում է պահանջը հողի համար, որքան որ ազգաբնակչութիւնը աճում է, որքան որ կապիտալիստ դասակարգը հողի կարիք է զգում, — այսինքն՝ որքան որ արտադրութեան կապիտալիստ սիստէմը ընդարձակւում է։ Սրանց բոլորի համեմատութեամբ՝ կալուածահասը բարձրանում է,— այսինքն աճում է հարստութեան այն բաղկացուցիչ մասը, որ կալուածատէրը, ուղղակի կամ կողմնակի, կարել հանել է այն յաւելեալ-արժէքից, որ այլապէս միայն կապիտալիստ դասակարգը պիտի յափշտակէր։

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՐԿԵՐ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆՈՒՄ Է ՅԱՒԵԼԵԱԼ-ԱՐԺԷՔԻ ԻՐ ԲԱԺԻՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԻՑ

Կապիտալիստի յաւելեալ-արժէքից պատառներ կորզելու գործին մէջ՝ կալուածատիրոջից ոչ նուազ ագահ է Պետութիւնը, Կառավարութիւնը։ Նորագոյն պետութիւնը զարգացել է կապիտալիստ դասակարգի հետ և նրա միջոցով, մինչև հասել է այն աստիճանի, երբ առաջինը դարձել է ամենազօրեղ գործիքը վերջինի բարձրացմանը համար։ Դրանցից իւրաքանչիւրը հովանաւորել է միւսի շահերը. կապիտալիստ դասակարգը չի կարող հրաժարուել Պետութեան օգնութիւնից. նա կարիք ունի Կառավարութեան զօրաւոր բազկին՝ իրեն պաշտպանելու համար ներքին և արտաքին թշնամիներից։

ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՍԻՍՏԵՄԻ ԹՈՒԼՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԴԱՐՁՆՈՒՄ „ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ“

Շահագործման կապիտալիստ սիստէմը ոչ մի կերպով մասնաւոր օրէնքների արդիւնք չէ։ Ընդհակառակը, սիստէմի թուլութիւնն է յառաջ բերել այն օրէնքները, որ այսօր այժ ունին։ Այդ օրէնքները չեն որ ստեղծում են պրոլետարիատի շահագործումը. գոյութիւն ունեցող ընկերային կարգին պատկանող միւս բոլոր գործողութիւնների հետ՝ օրէնքները միայն միջոց են տալիս, որ շահագործման սիստէմը դիւրին կերպով գործադրուի։ Եթէ արտադրութեան գլխաւոր զսպանակը Մբոյո�ը համարենք, ապա օրէնքն էլ կարելի է անուանել ԼՈՐՃԻՆ ՅԷՐԸ. որի նպատակն է ընկերային ներկայ յօրինուածութեան մէջ եղող հակամարտութիւնների շփումը նուազեցնել, որքան որ կարելի է։

Կապիտալիստ սիստէմի կազմութեան և յօրինուածութեան իւրաքանչիւր թուլութեան համար՝ ներկայ կառավարութիւնից պահանջւում է մի մի մասնաւոր պաշտօն։

ԹՈՒԼՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ՝ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ՎԻՃՈՒՄ ԵՆ ՇԱՀԻ ՀԱՄԱՐ — ԱՅՍՏԵՂԻՑ ԵՒ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ

Արտադրութեան կապիտալիստ սիստէմի թուլութիւններից մէկն այն է, որ նրա կազմակերպութիւնը աւելի ու աւելի բարդ է դառնում և անհատական կապիտալիստներն էլ աւելի ու աւելի են իրարուց կախումն ունենում։ Իւրաքանչիւր անհատական կապիտալիստի համար իր տնտեսական պարտականութեանց վաղ ընդ փոյթ կատարելը անհրաժեշտ պայման է, որպէսզի ուրիշներն էլ իրենց համապատասխան պարտականութիւնները կատարեն։ Ընկերային այդպիսի մի փափուկ կազմակերպութեան մէջ՝ իրարուց գանգատուող կամ վնասուող կողմերը աւելի նուազ չափով կարող են իրենց մէջ կարգադրել իրենց անհատական վէճերը, քան այդ կարելի էր անել նախկին ժամանակներում։ Հետևաբար, ինչ համեմատութեամբ որ ամէն եղական կապիտալիստ աւելի ու աւելի կախումն է ունենում ուրիշ շատերի ընդփոյթ գործակցութիւնից, նոյն համեմատութեամբ էլ աւելի ու աւելի են բարդւում և խճճւում նրանց ընդհարուող շահերը։ Այս թուլութիւնն է, որ անհրաժեշտ է դարձնում օրէնքների և դատավարութեան պահանջուած մի սիստէմ, ինչպէս և միշտ կազմ ու պատրաստ մի կառավարութիւն, որ կարող լինէր ամէն անհատական կապիտալիստի իր պարտականութիւնը կատարել տալ։ Այստեղից էլ յառաջանում է դատարանների ընդարձակ կազմակերպութիւնը, իրենց յարակից լայնածաւալ մասերով, որոնց բոլորի էլ նպատակն է գործադրութեան մէջ դնել նրանց վճիռները։

ԹՈՒԼՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ՝ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԱԶԳԵՐԸ ԻՐԵՆՑ ԵՐԿՐԻՑ ԳՈՒՐՍ ՊԻՏԻ ՏԱՐԱԾՈՒԻՆ — ԱՅՍՏԵՂԻՑ ԷԼ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտադրութեան կապիտալիստ սիստէմի մի ուրիշ թուլութիւնն էլ այն է, որ նա ինքն իր տապալումն է պատրաստում։ որքան որ նա աւելի է արտադրում, այնքան էլ աւելանում է պրոլետարների թիւը և, հետևաբար, այնքան էլ նուազում է գործաւորների ընդունակութիւնը իրենց սեպհական արտադ

րածները գնելու՝ իրենց իսկ երկրի վաճառանոցներում։ Այսպէս, ուրեմն, ամէն կապիտալիստ երկրում կապիտալիզմը սահմանափակում է իր սեպհական առտնին վաճառանոցը, թէև միևնոյն ժամանակ ինքը աւելի մեծ ծաւալ է առնում։ Առտնին վաճառանոցը կորցնելով՝ կապիտալիստը աչքը դարձնում է դէպի արտասահման և աշխատում է իր երկրի քաղաքական սահմաններից դուրս՝ օտար վաճառանոցներ գտնել։ Հետևաբար, սկզբից ի վեր, արտասահմանեան վաճառականութիւնը կարևոր դեր է խաղում կապիտալիստ արտադրութեան մէջ։ Ինչքան որ կապիտալիստ արտադրութիւնը ընդարձակւում է, այնքան էլ արտասահմանեան ապահովութեան և օտար երկրների վրայ իր սեպհական պետութեան ազդեցութեան տարածուելը կենսական խնդիր է դառնում իւրաքանչիւր կապիտալիստ ազգութեան համար՝ ամբողջ կապիտալիստ դասակարգի շահերի տեսակէտից։ Սակայն համաշխարհային վաճառանոցների մէջ մի ազգի կապիտալիստները ուրիշ ազգերի կապիտալիստների դէմ պայքարում են որպէս մրցակիցներ. որպէսզի մէկը միւսի հետ չափուել կարողանայ, ամէնքն էլ իրենց սեպհական պետութեան ոյժին են կարօտում, որ նա թնդանօթի բերանով իրենց „իրաւունքները“ պաշտպանի կամ, ինչ որ նրանք աւելի նախամեծար են համարում, իրենց մրցակիցներին դուրս վտարի։ Առաջ պատերազմները Աբսոլյուտ դոն (դինաստիական) համար էին, այսօր պատերազմները իսկապէս վաճառականական են. վերջին վերլուծութեամբ՝ պատերազմները այժմ ոչ այլ ինչ են, եթէ ոչ տնտեսական ընդհարումներ պատերազմող ազգերի կապիտալիստների միջև։ Արտադրութեան կապիտալիստ սիստէմի այս թուլութիւնից — աշխարհակալելու պահանջը և արտասահմանեան վաճառանոցներում իր դիրքը պահելը — ծագում է ցամաքային և ծովային ոյժերի ընդարձակածաւալ սպառազինման անհրաժեշտութիւնը։ Այստեղից էլ և՛ կառավարութեան մէջ պարբերական նախարարութիւնների գոյութիւնը, նաւատորմիղի և ցամաքային ոյժերի հետ միասին, որի չափը տարէց տարի աւելանում է յարաձուն և բազմածախս զինուորական պաշտօնեաների աւելացումով, — մի ծոյլ, չարտադրող դասակարգ, որ մշակում է „պատերազմական արհեստը“ և որը պէտք է իր գոյութիւնը պահէ կապիտալիստների յաւելեալ-արժէքով։

ԹՈՒԼՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ՝
ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԵՂԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ — ԱՅՍՏԵՂԻՑ ԷԼ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՒ ԶՕՐՔԸ՝ ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Արտադրութեան կապիտալիստ սիստէմի միւս թերութիւնն էլ կայանում է նրանում, որ նա հակամարտութիւններ է ծնեցնում շահագործողների և շահագործուողների միջև, սեպհականութիւն ունեցողների և պրոլետարների միջև։ Կապիտալիստ սիստէմի այս թուլութիւնն էլ իր նախորդ սիստէմների թուլութեան նման է, որովհետև նրանք բոլորն էլ խարխլուած են մարդկային շահագործութեան վրայ. բայց կապիտալիստ սիստէմը աւելի խիստ է դարձնում չարիքը և նոյն այդ չարիքը վերարտադրում է աւելի խտացած կերպով։ Որքան որ կապիտալիստ սիստէմը աւելի է զարգանում, այնքան էլ աւելի մեծ է լինում ընդհարումը և աւելի էլ սուր՝ հակամարտութիւնները երկու գլխաւոր դասակարգերի — կապիտալիստ և պրոլետարիատ — միջև, և նոյնքան էլ աւելի մեծ, աւելի զօրաւոր է դառնում պրոլետարիատը։ Պրոլետարների յարաձուն թիւը, օրապահիկի յարաձուն անապահովութիւնը, յարաձուն կարօտութիւնը և կախումն ունենալը, այս բոլոր պատճառները իրարու հետ միացած պրոլետարիատին աւելի ու աւելի ահարկու են դարձնում կապիտալիստ դասակարգի համար։ Այս թուլութիւնից կամ այս վտանգից էլ յառաջանում է կապիտալիստ պետութեան երրորդ պաշտօնը, այն է՝ գործաւոր դասակարգին հպատակութեան մէջ պահելու պաշտօնը։ Պետութիւնը այս մասնաւոր պաշտօնը կատարում է վերև յիշուած պաշտօնների ընդարձակուելովը։ Այստեղից էլ, ահա, անհրաժեշտութիւնը դատարանների աւելի ընդարձակ սիստէմի, ճնշող ոյժերի աւելի մեծ կամ նուազ մասնաւոր խստութեամբ, — որպիսիք են՝ ոստիկանութիւն, ժանդարմերիա, զօրք, քաղաքապահ զինուորներ, և այլն, և այլն։

ԹՈՒԼՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ՝
ՈՃԻՒ ՍՏԵՂԾՈՒՄՆ, — ԱՅՍՏԵՂԻՑ ԷԼ ԲԱՆՏԵՐԸ, ԶԳԱՍՏԱՐԱՆՆԵՐԸ, ԱՊԱՇԽԱՐԱՆՆԵՐԸ

Վերջապէս արտադրութեան կապիտալիստ սիստէմի աչքի ընկնող թուլութիւններից մէկն էլ այն է, որ նա ծնում է մի մասնաւոր, ամէն արժանիքից զուրկ, նողկալի, ոճրագործ

մի դասակարգ — մուրացկան-պրոլետարները (լումպեն-պրոլետարիատ)։ Որքան որ կապիտալիզմը շատ է զարգանում, այնքան էլ աւելի նեղ է գալիս այն հողը, որի վրայ որ ժողովուրդը կարող է կանգնել։ Ժողովրդական զանգուածների անապահովութիւնը և ուրիշներից կախու�ունենալը ճակատագրական հարուած է դառնում նրանց բնաւորութեան համար. ազգաբնակչութիւնից բարոյապէս ամենաթոյլերը արագ կերպով աւելի վար են ընկղմւում պրոլետարիատ դասակարգից, դառնում են մուրացկան-պրոլետարներ ու այդպիսով բարոյական ապականութեան մի մասն են կազմում։ մուրացկան-պրոլետարներ յառաջանում են թէ՛ կապիտալիստ և թէ պրոլետարիատ դասակարգերից՝ ունենալով անհամար յաւելուած նաև միջին դասակարգից։ Կապիտալի յարատև աճումը՝ անհրաժեշտ արտադրութեան համար, կործանում է այն կապիտալիստներին, որոնց ունեցած սեպհականութիւնը բաւական չէ մրցակցական մարտը յառաջ վարելու. նա ճզմում է միջին դասակարգի անդամներին, հնձում է և՛ պրոլետարներից շատերին։ Խարդախ կիրառութիւններ, ոճիրներ մի կամ միւս ձևով, ամենաթեթևից մինչև ամենաահռելին, դառնում են սովորական մէթոդներ, որոնց տրամադրուած են դիմելու ամենաժբախտները, ամենաթոյլերը. կապիտալիստ սիստէմի այս թուլութիւնից յառաջանում է, բոլոր կապիտալիստ երկրներում, կառավարական մի ընդարձակ ճիւղի անհրաժեշտութիւն, — այն է, ապաշխարաններ, բանտեր, „զգաստացնող“, „ուղղիչ“ տներ, իրենց անհամար յարակից մասերով։

Կապիտալիստ պետութեան այս չորս պաշտօնները և պարտականութիւնները, որ համապատասխանում են կապիտալիստ սիստէմի չորս գլխաւոր և ընդհանուր թուլութիւններին, ահագին ծախքերի դուռ են բաց անում և մեծապէս նուազեցնում են կապիտալիստի յաւելեալ-արժէքը։

Կապիտալիստ հասարակապետութեանց մէջ դեռ հինգերորդ մի աղբիւր էլ կայ, որի միջոցով կապիտալիստ դասակարգը կողոպտւում է իր յաւելեալ-արժէքի մի խոշոր մասից՝ նոյն իսկ իր պետութեան միջոցով։ Դա յառաջանում է լումպեն-պրոլետարների կազմակերպուած գործունէութիւնից և նրանց ընդարձակածաւալ ճիւղաւորումից՝ քաղաքական դաշտի վրան։ Հանրաքուէն, առ նուազն ամէն չափահասի մի մի քուէ

ունենալը, մուրացկան-պրոլետարների ձեռքին մի գործիք է դարձել, որ նրանք, յաճախ, շատ ճարտարութեամբ գործ են ածում և այդ միջոցով էլ, շատ անգամ, իրենց սեպհական ներկայացուցիչներին են զետեղում կառավարական պաշտօնների մէջ։ Կառավարութեանց մէջ եղած մուրացկան-պրոլետարների այդ ներկայացուցիչները ուղղակի մի մի կուսի են կապիտալիստ դասակարգի գլխին. նրանք ամենայն ճարպիկութեամբ կապիտալիստ դասակարգին թափ են տալիս իրենց հարստութեան հեղեղից, ու մուրացկան-պրոլետարների ձեռքի մէջ ուղղակի թափուող հարստութիւնը միջոց է դառնում, որ նրանք էլ աւելի անարժան, արատաւոր և ոճրագործներ լինեն։ Ա.Յդ երևոյթի յաճախակի կրկնուող և աչքառու օրինակները տալիս են Ամերիկայի Միացեալ-Նահանգները։ Միացեալ-Նահանգների օրէնսդրական բոլոր մարմինների մէջ մուրացկան-պրոլետարները ունեն իրենց ներկայացուցիչները, ինչպէս և նրանք շատ աթոռներ էլ ունեն գործադրական իշխանութեան մէջ։ Ա.Յդ իրողութեան կարկառուն օրինակներից մէկն է Նիւ-Եօրք քաղաքի մէջ եղող Թամանի Հօլը։ Քաղաքի կազմակերպուած այդ ոճիրը, այսինքն մուրացկան-պրոլետարներն են, որ տիրապետող են և կառավարական ղեկը իրենց ձեռքին ունեն, որով և մի փուշ են տեղական կապիտալիստների կողքին մէջ խրուած։

Ա.յսպէս, բազմատեսակ են այն ճանապարհները, որով պետութիւնը կամ կառավարութիւնը նուազեցնում է շահը կամ կապիտալիստի յաւելեալ արժէքը. որքան որ կապիտալիստ սիստէմը շատ է զարգանում, այնքան էլ աւելի են շատանում այն պատճառները, որոնք դէպի յաւելեալ-արժէքի կողոպուտն են տանում. հակառակ կապիտալիստների բոլոր հնարիմացութիւններին. նրանք չեն կարողանում սաղմի մէջ խեղդել յաւելեալ-արժէքը կողոպտող ճանապարհները. այն յաւելեալ-արժէքը, որ աշխատանքը արտադրում է և կապիտալիստը յափշտակում։

ԳԼՈՒԽ Զ.

ՇԱՀԻ ՍԱԿԻ ԻՋՆԵԼԸ

Այս զարգացման հետ միատեղ՝ արտադրութեան նպատակով կիրառութեան մէջ դրուած կապիտալի քանակութիւնը միտումն է ցոյց տալիս աւելի արագօրէն աճելու, քան թէ գործաւոր դասակարգի շահագործումը, այսինքն աւելի արագ՝ քան գործաւոր դասակարգի ստեղծած յաւելեալ-արժէքը: Օրինակի համար՝ սրանից վաթսուն կամ եօթանասուն տարի առաջ, այն ժամանակուայ կապիտալիստից շահագործուող տնային ճարտարագործութեան մէջ թել մանողին համեմատիր մեքենայի վրայ՝ գործարանում գործող այսօրուայ ոստայնանկի հետ: Ո՞րքան ահագին կապիտալ է անհրաժեշտ, որպէսզի այս վերջինս կարողանայ աշխատել: Մինչդեռ՝ նրա հետ համեմատելով՝ ձեռքով գործելու ոստայնանկութեան մէջ կապիտալիստի դրած կապիտալը շատ չնչին էր: Վաթսուն կամ եօթանասուն տարի առաջ՝ այն ժամանակուայ կապիտալիստը ոստայնանկին վճարում էր վարձագինը և նրան տալիս էր պէտք եղած բամբակը կամ վուշը: Վարձագների նկատմամբ շատ փոփոխութիւն չի եղել այն ժամանակուայ և այժմեանի մէջ, բայց մեքենայով աշխատող ոստայնանկը արտադրութեան համար այսօր հարիւր անգամ աւելի հում նիւթ է սպառում, քան ձեռքով գործող ոստայնանկը. բացի դրանից՝ ի՞նչքան ահագին ծախքերի դուռ են բաց անում անհրաժեշտ շինութիւնները, շոգեմեքենաները, շոգեկազգեահները, և այլն, որպէսզի թել մանելու ներկայ մեքենայական ընթացքը առաջ տանեն:

ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԻՉ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԷՐ ՊԱՀԱՆՋԻՈՒՄ

Նկատողութեան առնելու մի ուրիշ կէտ էլ կայ: Վաթսուն կամ եօթանասուն տարի առաջ թել մանողին աշխատցնող կապիտալիստի միայնակ ծախքերն էին վճարուելիք վարձագինը և հում նիւթը. այդ ժամանակ որ և է մի հաստատուն կապիտալ չկար. մանելու ճախարակը նկատողութեան առնելու համար շատ չնչին էր. ուստի կապիտալիստը իր դրամը շատ

շուտ էր յետ ստանում, գրեթէ իւրաքանչիւր երեք ամիսը մի անգամ: Իբրև հետևանք դրան՝ ամբողջ տարին գործածուող կապիտալի ԺԷ մասը հերիք էր, որպէսզի կապիտալիստը գործ սկսէր: Իսկ այսօր, ահագին կապիտալ է հարկաւոր համապատասխան մանարանների, մեքենաների և անհրաժեշտ շինութիւնների համար: Եթէ կապիտալիստը վարձագների և հում նիւթերի համար վճարած իր դրամները այժմ յետ ստանալ կարողարար նոյն իսկ այն ժամանակամիջոցում, ինչ որ վաթսուն կամ եօթանասուն տարի առաջ, դարձեալ հիմա աւելի երկար ժամանակ պէտք պիտի լինէր, որ նա կարողանար ձեռք բերել իր կապիտալի այն մեծաղոյգը, որին հաղիւ թէ նա կարիք ունէր վաթսուն կամ եօթանասուն տարի առաջ:

Մի շարք հանգամանքներ կան, որ հակառակ ուղղութեամբ են գործում: Սրանց մէջ ամենակարևորն են վարկի նորագոյն զարգացած սիստէմը, արտադրութիւնների գների վար իջնելը. որոնցից վերջինը անխուսափելի հետևանք է աշխատանքի յարաճուն արտադրականութեան: Բայց այս պատճառներից և ոչ մէկը կարող է հակակշռել միւսների ազդեցութիւնը: Արտադրութեան բոլոր ճիւղերի մէջ՝ արտադրութեան համար անհրաժեշտ կապիտալի քանակութիւնը տարէց տարի զգալի մի քանի մէջ՝ յամրընթաց կերպով, մի քանիսի մէջ էլ՝ աւելի արագ:

Ենթադրենք թէ վաթսուն կամ եօթանասուն տարի առաջ մի որ և է ճարտարագործութեան համար անհրաժեշտ կապիտալն էր 100 դոլլար, իսկ այսօր անհրաժեշտ գումարն է 1000 դոլլար և՝ բացի դրանից՝ ընդունենք թէ աշխատանքից շահագործուող գումարի չափն այսօր հինգ անգամ աւելի է առաջուանից, այսինքն մինչդեռ աշխատանքի առաջուան արտադրած յաւելեալ-արժէքը 50 դոլլար էր, այսօր այդ յաւելեալ-արժէքը 250 դոլլար է: Այս դէպքում յաւելեալ-արժէքի քանակութիւնը աճել է բացարձակապէս. սակայն՝ դրուած կապիտալի քանակութեան հետ համեմատելով, յաւելեալ-արժէքը դրուած ամբողջական կապիտալի հարիւրին յիսունը պիտի լինէր, մինչդեռ նա այսօր հասնում է միայն հարիւրին քսան և հինգ:

Այս օրինակը պարզապէս մի բացատրութեան համար էր՝ որ նպատակ ունէր մատնանիշել ընդհանուր միտումը:

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՒ ՅԱՒԵԼԵԱԼ-ԱՐԺԷՔԻ ԱՐԱԳ ԱՃՈՒՄԸ

Միացեալ-Նահանգներում, ինչպէս և կապիտալիստ ուրիշ երկրներում, ամէն տարի արտադրուող յաւելեալ-արժէքի ամբողջական քանակը արագօրէն աճում է. բայց և՛ աւելի արագ աճում է այն կապիտալի ամբողջական գումարը, որ կապիտալիստ դասակարգը գործ է ածում իր զանազան հաստատութիւնների և ձեռնարկների մէջ։ Նկատողութեան պիտի առնել և՛ այն, որ հարկերի միջոցով կառավարութիւնը ամէն տարի աւելի մեծ բաժին է յափշտակում կապիտալիստների յաւելեալ-արժէքից, «ոչ ոք և կապիտալն բաժին եղող յաւելեալ-արժէքի տանակուրէնը հեղինեղ պակասում է. նայելով որ աշխատանքի շահագործումը հեղինեղ աւելի ու աւելի է շատանում։»

Հետևաբար, կապիտալիստի դրած կապիտալի քանակութեան հետ համեմատելով՝ շահը — այսինքն աշխատանքի արտադրած յաւելեալ-արժէքի այն մասը որ կապիտալիստը պահում է իր համար — միտում է ցոյց տալիս աւելի ցած իջնելու։ Կամ, ուրիշ կերպ ասելով, արտադրութեան կապիտալիստական սիստէմի զարգացման ընթացքում՝ որ և է կապիտալի բերած շահը միտում է ցոյց տալիս հետզհետէ վար իջնելու։ Շահի վար իջնելու ապացոյցներից մէկն էլ տոկոսի ցածրանալն է։

Հետևաբար՝ «ինչպէս գործարարի շահագործումը քաջալերելու համար, ընդհանրապէս՝ կապիտալիստի շահի տոկոսը ցածրանալու դիտումն ունի։ Այս իրողութիւնը կապիտալիստ սիստէմի գլխաւոր հակասութիւններից մէկն է, — մի սիստէմ՝ որ հակասութիւններով լիքն է։

Կան մարդիկ՝ որոնք շահի այս վար իջնելուց եզրակացնում են թէ շահագործման կապիտալիստական սիստէմը ինքն իրեն վերջ կդնի, որովհետև կգայ ժամանակ՝ երբ կապիտալը այնքան քիչ շահ կտայ, որ կապիտալիստները սովամահ լինելու վիճակին մէջ կգտնուին և կտիպուին գործ ճարել որ աշխատեն։ Այս եզրակացութիւնը ուղիղ կլինէր, եթէ շահի վար իջնելուն հետ միասին՝ շահագրութեան մէջ դրուած կապիտալի քանակութիւնը միևնոյնը մնար. բայց իրականութիւնը այդպէս չէ։ Կապիտալիստ բոլոր ազգերի մէջ՝ կապիտալի ամբողջական քանակութիւնը աւելի մեծ արագութեամբ է շատանում, քան շահի տոկը վար իջնում։ Կապիտալի աճումը անհրաժեշտ նախապայման է շահի վար իջնելուն, եթէ տոկոսի

տոկը իջնում է 5-ից 4-ի և 4-ից՝ 3-ի. դրանով չի նուազում այն կապիտալիստի եկամուտը, որի կապիտալը միևնոյն ժամանակամիջոցում մէկ միլիոնից չորս միլիոնի է բարձրանում։

ՇԱՀԻ ՍԱԿԻ ՎԱՐ ԻՋՆԵԼԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻ ԵԿԱՄՈՒՏԻ ՆՈՒԱԶՈՒՄՆ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Շահի տոկի վար իջնելը, ինչպէս և տոկոսի, ոչ մի կերպով չի նշանակում թէ այդպիսով կապիտալիստ դասակարգի եկամուտը նուազում է։ Կապիտալիստների ձեռքը թափուող յաւելեալ-արժէքի զանգուածը աւելի ու աւելի է աճում։ Շահի և տոկոսի վար իջնելը նուազեցնում է միայն այն կապիտալիստների եկամուտները, որոնք չեն կարողանում իրենց կապիտալը աճեցնել այն չափով, որքան որ աւելացնում են նրանց մրցակիցները։ Ճարտարագործական զարգացման ընթացքում՝ ամենարարձր կէտն այն ժամանակն է, երբ կապիտալը իր սեպհականատիրոջ պահում է „նրա դասակարգային արժանապատուութեան“ վրայ։ Հետզհետէ մեծ է դառնում այն կապիտալի քանակութիւնը, որ իր իւրացնողին ստիպած է դարձնում որ և է աշխատանքից և նրան միջոց է տալիս ապրելու ուրիշների աշխատանքով։ Այսօր բոլորովին անհամապատասխան է որ և է ձեռնարկի համար այն գումարը, որ յիսուն տարի առաջ մի ճարտարագործութիւն սկսելու համար բաւական էր։ Այն գումարը որ յիսուն տարի առաջ նշանաւոր մի հարստութիւն էր, այսօր մի աննշան մասնիկ է։

Շահի և տոկոսի ցածնալը ոչ թէ անկումն է յառաջ բերում, այլ կապիտալիստ դասակարգի ամենամեծ դիւրութիւն։ Ամէն տարի կապիտալիստ դասակարգի միջից վտարուում են փոքր կապիտալիստները և նրանք մտնում են կեանքի և մահու միևնոյն պայքարին, որի մէջ որ գտնուում են փոքր վաճառականը, փոքր արտադրողը, փոքր հողատէր գիւղացին, փոքր ագարակապանը և ընդհանրապէս փոքր գործատէրերը, — դա կեանքի և մահու մի պայքար է, որ կարող է աւելի կամ նուազ երկարիլ, բայց կվերջանայ միայն նրանով, որ նրանք բոլորն էլ կընկնեն պրոլետարիատի մէջ, կամ, առ առաւելն, այն վախճանին կհասնի՝ որ նրանց որդիները պրոլետարներ

կդառնան։ Այն ձիգը որ նրանք թափում են իրենց սպասող ճակատագրից խոյս տալու, նոյն այդ ձիգը աւելի արագացնում է նրանց քայքայումը։

Մարդ յաճախ զարմանում է թէ ինչպէս շատ մեծ թուով պարզամիտներ իրենց դրամները վստահանում են զանազան խաբեբաների՝ բարձր տոկոս ստանալու հրապոյրով. այդպիսիները, սովորաբար, թուում է թէ խենթեր չեն։ Ինչպէս որ Պանամայի ջրանցքի Գայթակղութիւնը՝ նոյնպէս և համանման ուրիշ շատ տեսակ օրինակներ զօրաւոր կերպով ապացուցեցին, որ իրենց կապիտալը շահեցնելու դիտումով մղուած յուսահատ պայքարի մէջ՝ խարդախ ձեռնարկները վերջին ծղօտներն են, որից որ կառչում են ընկզմուող կապիտալիստները։ Ագահութեան և խարդախութեան սէրը չէ այնքան նրանց-կուրացնողը, որքան որ աղքատութեան երկիւղը։

ԴԼՈՒԽ Է.

ՄԵԾ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄԸ — ՍԷՆԴԻԿԱՏՆԵՐ ԵՒ ԹՐԵՍՏՆԵՐ

Անհատական արտադրութեան և կապիտալիստ արտադրութեան միջև եղած մրցակցական կռուի հետ միատեղ՝ կատաղաբար առաջ է գնում մեծ և փոքր կապիտալիստների միջև եղած մրցակցական կռիւը։ Իւրաքանչիւր օր յառաջ է բերում մի նոր հնարագիտութիւն, մի նոր գիւտ, որի կիրառութիւնը մեծապէս աճեցնում է աշխատանքի արտադրականութիւնը։ Սրանցից իւրաքանչիւրը, աւելի նուազ կամ մեծ չափով, օգտակարութիւնից զրկում է առաջուան մեքենաները և նոր մեքենաների ներմուծելը անհրաժեշտութիւն է դարձնում ու՝ բացի դրանից՝ յաճախ պատճառ է դառնում գոյութիւն ունեցող շինութիւնների աւելի մեծացնելուն։ Այն կապիտալիստը, որ այդպիսի վճռական բոպէներին իր տրամադրութեան ներքոյ չունի պահանջուած կապիտալը, անկարող է դառնում՝ ուշ կամ կանուխ՝ մրցակցական կռուի մէջ իր դիրքը պահելու, ոտի և ընկնում է. կամ շատ մեծ կորուստով ստիպւում է իր կապիտալը բանեցնելու աւելի փոքր՝ մի այնպիսի ձարտարագործութեան մէջ, որ բացի իրենից աւելի ուժեղ կապիտալիստների ձեռք դեռ չի անցել։ Այս եղանակով մեծ արտադրութեան մրցումը պատճառ է դառնում փոքր արտադրութեան կապիտալի յաւելամթերումին և դրանով փոքր կապիտալիստների միջև եղած մրցումը վայրագ է դարձնում ու նրանց քայքայումն էլ աւելի արագ։

Մեծ արտադրութեան վարած ձարտարագործութիւնները աւելի ու աւելի են տարածւում. այն մեծ հաստատութիւնները, որոնց գործաւորների թիւը առաջ հազիւ հարիւրների էր հասնում, այժմ հսկայ ցներ են դարձել և գործ են ածում հազարաւոր ձեռքեր. փոքր հաստատութիւնները օրէ օր վար են ընկնում։ Ձարտարագործական զարգացումը՝ մի որոշեալ կէտի հասնելուց յետոյ — մի կէտ, որին հասել են Միացեալ-Նահանգներում առ նուազն տասը տարի սրանից առաջ — փոխանակ քաղցնելու, ընդհակառակը՝ աւելի նուա-

ՀԷՑՆՈՒՄ է անհատական ձեռնարկների թիւը։ Որովհետև երկրագործութիւնը դարձել է մի ճարտարագործութիւն, ուստի նոյն երևոյթը նշմարւում է և՛ այստեղ — փոքր ագարակապանների թիւը նուազում է, իսկ մեծ ագարակատէրերի թիւը շատանում է։

Դեռ այս բոլորը չէ։ Ճարտարագործական զարգացումը արագ կերպով կապիտալիստ ձեռնարկները աւելի ու աւելի կեդրոնացնում է եղական մի ձեռքում, լինի այդ ձեռքը միայն մի կապիտալիստի, կամ կապիտալիստների մի այնպիսի բաղկացութեան, որ օրէնքի առջև ճանչցւում է որպէս մի անձն — այն է Սէնդիկատը, Թրըստը։

Այն շաւիղները, որ տանում են դէպի այս ուղղութիւնը, բազմաթիւ են։

ՇԱՒԻՂՆԵՐԸ ՈՐ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԴԷՊԻ ԹՐԸՍՏ

Շաւիղներից մէկը որ տանում է դէպի Թրըստը՝ կապիտալիստների այն մտահոգութիւնն է, որով նրանք շարունակ ձգտում են մրցումը վաճառանոցից վտարելու։ Վերևը ցոյց տրուեցաւ որ արտադրութեան նորագոյն սիստէմի գլխաւոր զսպանակը մրցումն է. արդարև՝ մրցումը ապրանքային արտադրութեան գլխաւոր զսպանակն է, այսինքն՝ ծախու համար եղած արտադրութեան։ Սակայն որքան էլ անհրաժեշտ լինի մրցումը ապրանքային արտադրութեան համար ընդհանրապէս, այնու ամենայնիւ չկայ և ոչ մի կապիտալիստ, որ չփափագէր տեսնելու էր ոեպհոական ապրանքները բոլորովին ազատ՝ վաճառանոցի մրցումից։ Եթէ նա միակ տիրապետողն է այն ապրանքների, որոնց համար որ պահանջ կայ, ապա նա այդ ապրանքների մենավաճառութիւնն էլ ինքը կունենայ. հետևապէս կարող է այդ ապրանքները ծախել իրենց իսկական արժէքից շատ վեր, քանի որ իր ապրանքին կարիք ունեցողները բացարձակապէս իրենից կախումն պիտի ունենան։ Իսկ եթէ վաճառանոցի մէջ միևնոյն ապրանքները ծախող մի քանի հոգի լինին, ապա նրանք կարող են մենավաճառութիւն հաստատել միայն այն ժամանակ, երբ այնպիսի ընկերակցութիւն կկազմեն, որ զօրութեամբ կդառնան միայն մի վաճառող. այդպիսի բաղկացութիւններ — Ռինգներ, Սինդիկութիւններ, Թրըստներ — աւելի շուտ և դիւրին կերպով են կազմակերպւում, որքան որ քիչ լինի այն մրցողների թիւը, որոնց ընդհարուող

շահերը բոլորին էլ բերում դնում են միևնոյն գլխարկի տակ։

Որքան որ կապիտալիստ սիստէմը ընդարձակում է իր վաճառանոցը և բազմացնում է նրա մէջ մրցողների թիւը, այնքան էլ դրանով դժուար է դարձնում մենավաճառների բաղկացութիւնները արտադրութեան և վաճառականութեան մէջ։ Բայց կապիտալիստ ճարտարագործութեան ամէն ճիւղի մէջ գալիս է մի րոպէ, ուշ կամ կանուխ, երբ նրա չափազանց զարգացումը պատճառ է դառնում վաճառատների նուազելուն։ Երբ հասնում է այդ րոպէն, այդ ժամանակից սկսուած, ընթացքը արագանում է դէպի Սէնդիկատութիւն և Թրըստ։ Դէպի Թրըստը տանող ժամանակը կարելի է արագացնել, երբ տուած մի երկրի մէջ որ և է ճարտարագործութիւն կարելի է հովանաւորել իր առտնին շուկայի մէջ՝ արտաքին մրցողների դէմ բարձր նիհեր (տարիֆ) նշանակելով։ Այդպիսի պարագայում արտաքին մրցողների թիւը նուազում է և առտնին արտադրողները կարողանում են աւելի դիւրութեամբ միատեղ գալ և մենավաճառութիւն հաստատել, ու շնորհիւ „Առտնին ճարտարագործութեան հովանաւորութեան“ իրենց ուզածին չափ խուզել ազգային սպառողը։

Վերջին քսան տարուայ ընթացքում, այն Թրըստների թիւը՝ որոնք նպատակ ունին „կանոնաւորելու“ իրենց արտադրութիւնների գինը, մեծապէս բազմացել է՝ մանաւորապէս „հովանաւորուած“ երկրներում, ինչպիսին են Միացեալ-Նահանգները, Ֆրանսիան և Գերմանիան։

Երբ Թրըստը կազմւում է, բաղկացուցիչ մի քանի ձեռնարկող Տներ զօրութեամբ միանում, կազմում են ձեռնարկող Դ Տուն՝ Դ եղակի անձի ղեկավարութեան ներքոյ։

Արտադրութեան զարգացման համար ամենաանհրաժեշտ նիւթերն են. օրինակ, ածուխը և երկաթը, որ սէնդիկութիւնների և Թրըստների առաջին առարկաներն են դառնում։ Ամենամեծ բաղկացութիւնները իրենց ազդեցութիւնը նոյն իսկ մենավաճառութիւն ունեցող ճարտարագործութիւններից շատ հեռու են տարածում. արտադրութեան ամբողջ կազմուածքը նրանք կախումն են դարձնում մի քանի մենավաճառներից։

Ինչպէս որ միանման ճարտարագործութեամբ պարապող զանազան հաստատութիւններ փութկոտութիւն են ցոյց տալիս մէկ ձեռքի մէջ կեդրոնանալու, միևնոյն փութկոտու-

թիւնը ցոյց են տալիս և՛ զանազան տեսակ ճարտարագործութիւնների մէջ գործող տարբեր հաստատութիւնները. որոնցից մին կամ հում նիւթն է մատակարարում կամ ուրիշներին պէտք եղած մեքենաներն է տալիս — այդպիսիներն էլ աշխատում են մի եզական ղեկավարութեան տակ մտնել։ Սովորական է տեսնել երկաթուղու գծերի շատ սեպհականատէրեր, որոնք միևնոյն ժամանակ սեպհականատէր են ածխահանքերի և տեղաշարժական մեքենաների. շաքար պատրաստողները աշխատում են ունենալ իրենց սեպհական շաքարեղէգը։ Նաև արտադրող ընկերութիւնները իրենք են պատրաստում իրենց սեպհական աւազանները, կթղանները, և այլն։

Մի երրորդ ուղի էլ կայ, և դա ամենապարզն է, որով շատ հաստատութիւններ մէկի են վերածւում։

Որքան որ արտադրութեան բանաւոր մի սիստէմի ներքոյ կապիտալիստի պաշտօնը (ֆունկցիա) աւելորդ լինի, սակայն ներկայ սիստէմի ներքոյ այդ պաշտօնը բարձրօրէն կարևոր է. արտադրութեան գործիքների մասնաւոր սեպհականութեան սիստէմի ներքոյ՝ մեծ արտադրութիւնը հնարաւոր է միայն որպէս կապիտալիստ արտադրութիւն։ Այս սիստէմի ներքոյ՝ որպէսզի արտադրութիւնը անսայթաք յառաջ երթայ, անհրաժեշտ է որ կապիտալիստը ասպարէզ մտնի իր կապիտալով միասին և յարմարապէս գործադրութեան մէջ դնի այն. հետևաբար՝ թէև կապիտալիստը ոչինչ չէ արտադրում, թէև նա չի յառաջացնում արժէքներ, բայց իր կապիտալի միջոցով նա մի կարևոր դեր է խաղում ընկերութեան տնտեսական կեանքի մէջ։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԿՏՐՕՆ-ԿՏՐՈՂ

Որքան որ կապիտալիստը աւելի շատ գործ է ունենում, այնքան էլ աւելի անհրաժեշտ է դառնում իրեն թեթևացնելու իր յարաձուն պարտականութիւնների մի մասից, և այդ անում է կամ իր գործերի մի մասը փոխանցելով կապիտալիստ ուրիշ հաստատութիւնների կամ իր ղեկավարութեան տակը գործող ուրիշ պաշտօնեաների։ Իհարկէ ճարտարագործութեան պրոցէսի տեսակէտից բոլորովին տարբերութիւն չի անում թէ այդ պաշտօնները կատարում է ինքը կապիտալիստը կամ իր ղեկավարութեան ներքոյ գործող պաշտօնեան, քանի որ վարած այդ պաշտօնները ոչ մի արժէք չեն արտա-

դրում, երբ կատարում է պաշտօնեան կամ կապիտալիստը ինքը։ Հետևաբար կապիտալիստը այդ բոլորը պէտք է վճարի իր յաւելեալ-արժէքից։ Սա մի ուրիշ միջոց է, որով կապիտալիստի յաւելեալ-արժէքը և, հետևաբար, նրա շահը ցածրանում է։ Բնականաբար իր ծառայողներին տուած վարձագները — պաշտօնեաներին, տնօրէններին, վերատեսուչներին, և այլն — կապիտալիստը դնում է արտադրութեան ծախքի վրան և ներմուծում է աշխատանքին վճարուելիք ֆոնդերի վերնագրին մէջ։

Եթէ մի ձեռնարկի ածումն կապիտալիստին ստիպում է իր գործը թեթևացնել՝ իրեն տեղապահներ նշանակելով, միևնոյն ժամանակը՝ նոյն այդ ձեռնարկի տուած յարաձուն յաւելեալ-արժէքի միջոցով՝ այդ բանը անելը իրեն շատ դիւրին է դառնում։ Որքան որ մեծ լինի յաւելեալ-արժէքը, այնքան էլ աւելի պաշտօններ կապիտալիստը կարող է փոխանցել իր ծառայողներին՝ մինչև որ նա կարող կլինի վերջապէս թեթևանալ բոլոր պաշտօններից և իրեն կվերապահի միայն մի մտահոգութիւն, այն թէ՝ ինչպէս օգտակար կերպով գործածի իր շահի այն մասը, որին նա կարիք չունի իր անձնական սպառումին համար։

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԵՒՈՒՄ ԵՆ ԵՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՋԱՆՈՒՄ Է

Կապիտալիզմի զարգացման ներկայ աստիճանին մէջ՝ ձեռնարկների թիւը տարէց տարի աւելանում է։ Այդ երևում է բաժնետիրական (ակցիոներական) ընկերութիւնների սաստիկ բազմանալուց, դա այնպիսի մի երևոյթ է, որից ամենապարզ խելքը իսկ կարող է եզրակացնել թէ կապիտալիստի անձը չէ այլևս որ կարևորութիւն ունի, այլ նրա կապիտալը։

Շատ պարզամիտներ երևակայեցին թէ բաժնետիրական ընկերութիւնները միջոցներ են, որով մեծ արտադրութեան բարիքները մատչելի պիտի լինին „փոքր ունևորին“։ Դա մի պատրանք է, նման այն պատրանքին, որ անքննադատ մտքերը տածում էին դէպի վարկը։ Բաժնետիրական ընկերութիւնը, ինչպէս որ վարկը, ընդհակառակը մի միջոց է մեծ կապիտալիստի տրամադրութեան ներքոյ դնելու փոքր ունևորների սեպհականութիւնը։

Երբ ճարտարագործութեան սի ճիւղ կարող է առաջ եր-

թալ՝ առանց կապիտալիստի անձին կարիք ունենալու, ասել է թէ ամէն ոք կարող է նրա մէջ մտնել, պայմանով, իհարկէ, որ բաժնեթղթեր գնելու անհրաժեշտ դրամագլուխն ունենայ, բոլորովին նշանակութիւն չտալով գործ վարելու մէջ իր ձեռնհասութիւն ունենալուն կամ չունենալուն։ Այս իրողութեան շնորհիւ մի կապիտալիստ կարող է իր ձեռքի մէջ միացնել իրարու հետ ոչ մի առնչութիւն չունեցող զանազան տեսակ ձարտարագործութիւններ։ Մի մեծ կապիտալիստ շատ դիւրութեամբ կարող է իր ձեռքի մէջն առնել բաժնետիրական ընկերութիւններ. դրա համար հարկաւոր է որ նա բաժնեթղթերի մեծամասնութիւնը իր ձեռքը ձգի, որով գործը այնուհետև ամբողջապէս կախումն կունենայ իրենից և ամէն ինչ ենթակայ կլինի իր շահերին։

Վերջապէս, ինկատի պիտի ունենալ այն, որ մեծ կապիտալները աւելի արագ են աճում՝ քան փոքրերը. — որքան որ մեծ լինի կապիտալը, նոյնքան էլ աւելի մեծ կլինի շահի չափը (միւս պայմանները հաւասար լինելով), այսինքն՝ կապիտալի տուած եկամուտի չափը. որքան որ համեմատօրէն աւելի փոքր լինի այն քանակութիւնը, որ կապիտալիստը կուզէ անձնականապէս գործածել, աւելի էլ մեծ կը լինի այն մասը՝ որ նա կարող է աւելացնել իր նախկին շահագրական ձեռնարկների վրան՝ որպէս նոր կապիտալ։ Կապիտալիստը, որի բռնած գործը նրան տարեկան եկամուտ է բերում 10,000 դոլլար, կարող է միայն համեստօրէն ապրել՝ կապիտալիստ գաղափարի համաձայն։ Նա ինքն իրան բախտաւոր կհամարի, եթէ յաջողի ամէն տարի մի կողմ դնել 2,000 դոլլար — իր շահի 1/5-ի հինգերորդը։ Միւս կողմից՝ այն կապիտալիստը, որի գործը այնքան մեծ է, որ կարող էր տարին նրան տալ 100,000 դոլլար, եթէ նոյն իսկ իր անձին վրայ ծախսէր հինգ անգամ աւելի՝ քան թէ առաջինը, ապա նա տարին կարող էր 60.000 դոլլար՝ իր շահի երեք հինգերորդը՝ աւելացնել իր նախկին կապիտալին։

Եթէ կապիտալիստը ունի մի կապիտալ, որ նրան տարեկան բերում է միլիոնի եկամուտ, ապա, կանոնաւոր պայմանների ներքոյ, հազիւ թէ նա կարողանայ իր եկամուտի 1/10-ը ծախսել, ուրեմն ոչ մի կերպ չի դժուարանալ մնացեալ պահերորդը կուտակել։

Եւ այսպէս՝ յարաճուն կերպով։ Մինչդեռ փոքր կապիտա-

լիստները հարկադրուած են աւելի ու աւելի դժուար կռիւ մղելու իրենց գոյութեան համար, մեծ կապիտալիստների ձեռքի մէջ եղող մեծ կուտակումները աւելի ու աւելի արագ են ուռչում և հասնում ահագին համեմատութիւնների։

Ամփոփումն։ Մեծ հաստատութիւնների աճումը, մեծ հարստութիւնների արագ բազմացումը, փոքր հաստատութիւնների թուի յարատև նուազումը, շատ գործերի շարունակական կեդրոնացումը միայն մէկ ձեռքի մէջ, — այս բոլորը ակներև կերպով ցոյց են տալիս որ արտադրութեան կապիտալիստ սիստէմի միտումն է աւելի նուազ ձեռքերի մէջ կեդրոնացնել արտադրութեան այն գործիքները, որոնք կապիտալիստ դասակարգի մենավաճառութիւնն են դարձել. պարզ երևում է որ այդ միտումի վերջնական վախճանը պիտի լինի արտադրութեան բոլոր գործիքների կեդրոնացումը փոքրաթիւ անձնաւորութիւնների կամ բաժնետիրական ընկերութիւնների ձեռքի մէջ, որոնք արտադրութեան այդ բոլոր միջոցները գործ են ածում իբրև անհատական սեպհականութիւն եւ նրանց հետ վարում են իրենց ցանկութեան համաձայն. երևում է և՝ այն՝ որ արտադրութեան ամբողջ մեքենան հսկայական մի գործ կդառնայ՝ ենթակայ միայն սոսկական մի տիրոջ։ Կապիտալիստ սիստէմի ներքոյ՝ արտադրութեան միջոցների մասնաւոր սեպհականութիւնը դէպի այն կէտն է տանում որ՝ մէկի բացառութեամբ, ամէնքն էլ պիտի դառնան սեպհականազուրկներ։ Ուրիշ խօսքով, կապիտալիստ սիստէմը ինքը դէպի իր քայքայումն է առաջնորդում. այդ սիստէմի զարգացումը ինքն իրեն արմատախիլ անելու է ձգտում. որքան որ այդ սիստէմը տարածւում է. նրանից անբաժան հակասութիւնները աւելի ու աւելի են աչքի ընկնում։ Այն րոպէին՝ երբ վարձագնով աշխատողները, շահագործուողները միայն սպառողների մեծամասնութիւնը կկազմեն, այն ժամանակ իրենց մէջ յաւելեալ-արժէքներ բովանդակող արտադրութիւնները այլևս չեն գտնիլ գնողներ, կմնան անվաճառելի և յաւելեալ-արժէքը ինքնին անարժէք կդառնայ։

ՓՈՔՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ԿԱԽՈՒՄՆ ՈՒՆԻՆ ՄԵԾ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻՑ

Ուղիղն ասած, վերև ուրուագծուած իրերի այդպիսի մի դրութիւն թէ՛ անմիտ կլինէր և թէ՛ անկարելի։ Իրերի այդ

պիսի դրութիւն չի կարող, և ոչ էլ հնարաւոր է, ձիշդ այդ աստիճանին հասնելու, միայն պարզ մերձեցումը դէպի այդպիսի պայմանները այնքան մեծ չափերով կբազմացնէր ընկերութեան մէջ տանջանքները, հակամարտութիւնները և հակասութիւնները, որ այդ պայմանները անտանելի կը դառնային և ընկերութիւնը բեկորների կրաժնուէր, եթէ, իհարկէ, տնտեսական ներկայ ծաւալմանը իր ժամանակին տարբեր մի ընթացք չտրուէր։ Թէև իրերի այդպիսի դրութեան ոչ մի ժամանակ չենք հանիլ, այնուամենայնիւ, յամառօրէն, մենք դիմում ենք դէպի այդ ուղղութիւնը։ Այն ժամանակ, երբ մի կողմից իրարուց անջատ կապիտալիստ ձեռնարկների սակաւաթիւ ձեռքերի մէջ կեդրոնացումը արագօրէն յառաջադիմում է, նոյն այդ ժամանակ, միւս կողմից էլ, ըստ երևոյթին անկախ գործատների իրարուց կախումն ունենալն է խտանում, որպէս անխուսափելի հետևանք աշխատանքի բաժանման։ Սակայն այս փոխադարձ կախումը աւելի միակողմանի է դառնում այն տեսակէտով, որ փոքր կապիտալիստները և՛ս աւելի կախումն են ունենում մեծ կապիտալիստներից։ Ինչպէս որ այժմ առանին ճարտարագործութեան մէջ գործող շատ գործաւորներ, որոնք թէև անկախ են թուում, բայց իրօք նրանք որ և է մի կապիտալիստի վարձագնի գործաւորներ են, այդպէս էլ են նա՛և բազմաթիւ փոքր կապիտալիստները, որոնք թէև երևութական անկախութիւն ունին, բայց իրօք հարկատուներ են ուրիշ կապիտալիստների. երևութական անկախութիւն վայելող բազմաթիւ կապիտալիստ գործատներն իրապէս մասնաճիւղեր են հսկայ կապիտալիստ մի ուրիշ հաստատութեան։ Փոքր կապիտալիստների մեծ կապիտալիստներից այս կախումն ունենալը, հաւանականօրէն, աւելի մեծ արագութեամբ յառաջ է գնում, քան թէ բազմաթիւ արտադրութիւնների մի քանի մասնաւոր սեպհականատէրերի ձեռքի մէջ կեդրոնանալը։ Կապիտալիստական երկրների տնտեսական ամբողջ մեխանիզմը այժմ արդէն, վերջնական հաշուով, ենթարկուում է մի քանի հսկայ կապիտալիստների և նրանց կողմից էլ շահագործուում է։ Նրա յայտնի միացումը մի քանի գլխաւոր կապիտալիստների ձեռքում գրեթէ միայն կփոխէր գործի ձևը։

Միացեալ-Նահանգներում, ուր կապիտալիստական արտադրութիւնը աւելի արագ է աճում, մենք արդէն գտնում ենք

կապիտալիզմի „վերջնական նպատակին“ մօտեցող մի բան։ Այս դարուս սկզբներում այնտեղ կազմուեցաւ Պողպատի Թրըստը՝ մօտ 1,125,000,000 դոլլար կապիտալով։ Այդ բաղկացութիւնը իր մենաշնորհն էր դարձրել Միացեալ-Նահանգների պողպատի գրեթէ ամբողջ արտադրութիւնը։ Այդ բաղկացութեան գլխաւոր սեպհականատէրերը և իշխողներն են հիմ մարդիկ՝ Ռոկֆելլը, Մորգան, Վանդերբիլդ, Գուլդ և Հարրիման։ Նրանց տիրապետութեան չափի և տարածութեան մասին շատ յաճախ է խօսուում ամերիկեան մամուլի մէջ, — նրանք գրեթէ սեպհականացրել են Միացեալ-Նահանգների ածխահանքային շրջանների մեծ մասը և այն բոլոր երկաթուղիները, որոնք տանում են դէպի այդ շրջանները և հետևաբար նոյնպէս տիրապետում են և՛ այն ածխահանքերին, որոնք իրենց անմիջական սեպհականութիւնը չեն համարուում։ Նրանց է պատկանում, նմանապէս, երկաթ արտադրող հանքային շրջանների մեծ մասը, ինչպէս և բոլոր մեծաշէն այն շինութիւնները, որոնք վերաբերում են այդ հանքերի մշակմանը, երկաթի և պողպատի արտադրութեանը, ու այն բոլոր արտադրութիւններին, որոնք պատրաստուում են այդ մետաղներից։ Բոլոր մանր երկաթի գործարանները նրանցից պէտք է գնեն իրենց հում նիւթը։ Նրանք ունին բաւական թուով երկաթուղիներ և ջրանցքներ, որոնցմով կարող են իրենց ածուխը և հանքային արտադրութիւնները իրենց գործարանները տանել։ Նրանց են պատկանում երկաթուղային մեծ գծերի այն ամբողջ ցանցերը, որոնք Ատլանտեան Ովկիանոսի և Մեքսիկայի ծոցի վրայ գտնուող գլխաւոր նաւահանգիստները միացնում են Խաղաղական Ովկիանոսի նաւահանգիստների հետ. դրանց հետ միասին՝ Միսիսիպից դէպի Խաղաղական Ովկիանոսը տանող երեք գծերից երկուսը պատկանում են նրանց, ինչպէս և նրանցն է ովկիանական հսկայ շոգենաւերի ամբողջ նաւատորմիղը։ Նրանք մենաշնորհ են դարձրել նաւթային ամբողջ արտադրութիւնը։ Նրանց է պատկանում ոսկու, արծաթի, պղնձի և կապարի հանքերի մեծ մասը ու տեղափոխութեան միջոցները և Միացեալ-Նահանգների գլխաւոր քաղաքների լուսաւորութեան գործը. նմանապէս նրանց են պատկանում — թէ ի՞նչ քանակութեամբ, այդ միայն իրենք գիտեն — օրէնսդիրները և քաղաքային խորհրդականները։ Ցաւենայն դէպս, այդ հսկայական թրըստը իր ձեռքի տակ ունի բաւականաչափ

օրէնսդիրներ և քաղաքային խորհրդականներ, որոնք կատարելապէս բաւական են՝ որպէսզի նրանք ամենաշահաւէտ կերպով շահագործեն և անընդհատօրէն ընդլայնեն իրենց այդ բոլոր տիրապետութիւնները:

Մինչդեռ ժամանակին, երբ ազգաբնակչութեան մեծամասնութեան տնտեսական կախումն ունենալը կապիտալիստ դասակարգից յարատև աճման մէջ է. նոյնպէս էլ աճման մէջ է կապիտալիստ դասակարգի անդամների մեծամասնութեան կախումն ունենալը փոքրաթիւ կապիտալիստներից, որոնց թիւը հետզհետէ փոքր է դառնում, բայց որոնց ոյժը, իրենց հարստութեան պատճառաւ՝ աւելի ու աւելի մեծ է դառնում:

Բայց, ինչպէս որ օրապահիկի անապահովութիւն ունին պրոլետարները, մանր վաճառականները, փոքրաքանակ արտադրողները, արհեստաւորները, գիւղական փոքր հողատէրերը և փոքր ագարակատերները, նոյնպէս էլ մի կապիտալիստի ուրիշ կապիտալիստից կախումն ունենալը սաստկացնում է նրա օրապահիկի անապահովութիւնը: Առաջինի փոքրաքանակութիւնը երկրորդինն է: Իրենց կախումն ունենալու հետ միասին շատանում է նաև նրանց զրկութեան անապահովութիւնը: Ցայտնի բան է, որ աւելի փոքր կապիտալիստները և՛ս աւելի շատ են նեղւում, բայց նոյն իսկ կապիտալի ամենամեծ կուտակումն էլ բացարձակ ապահովութիւն չի տալիս:

ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԵՂԱԾ ՄՐՑՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Արդէն վերև յիշուեցաւ, որ ներկայ կապիտալիստ սիստէմի անապահովութեան պատճառներից մէկն էլ՝ ամենաթեթև ազդեցութիւնների ենթարկուելու տեսակէտից՝ արտադրութեան մեխանիզմի յարաճուն դիւրազգածութիւնն է: Մէկ ուրիշ պատճառ էլ կայ, որ պէտք է յիշուի: Որքան որ դասակարգերի մէջ եղած հակամարտութիւնները սուր կերպարանք են առնում. որքան որ ժողովրդային զանգուածը ներհակ շահերով զինուած մէկը միւսի դէմն է կանգնում, որքան որ այդ սիստէմը ամէն մէկի ձեռքին տալիս է աւելի ու աւելի ուժեղ, թէև տարբեր զէնքեր, — արտադրութեան կապիտալիստ սիստէմը շատացնում է պատեհութիւնները խառնաշփոթութիւնների համար և բազմացնում այն վնասները, որ այդ խառնաշփոթութիւնները պատճառում են:

Աշխատանքի յարաճուն արտադրականութիւնը բազմացնում

է ոչ միայն յաւելեալ-արժէքը, այլ նաև ապրանքների քանակութիւնը, որ լցւում են վաճառանոցը և որից կապիտալիստը կուզէր իր օձիքը ազատել: Աշխատանքի շահագործման հետ միատեղ՝ կապիտալիստների միջև եղած մրցումը շատանում է, և այդ մրցումը դառնում է մի խիստ պայքար, որ ամէն արտադրող մղում է մէկը միւսի դէմ: Բացի դրանից՝ արտադրութեան տեխնիքական մէթոտների մէջ յարատև մի յեղաշրջումն է տեղի ունենում. անհրաժեշտաբար ստեղծւում են նոր հնարքներ և գիւտեր, որոնք ոչ միայն անարժէք ու աւելորդ են դարձնում արդէն գոյութիւն ունեցող մեքենաները և անհատ գործաւորները, այլ, յաճախ, ամբողջ հաստատութիւններ. այո՛, նոյն իսկ ճարտարագործական ամբողջ ճիւղեր:

Ոչ մի կապիտալիստ կարող է վստահիլ հաստատուն մի ապագայի, ոչ մէկը ապահովաբար կարող է ասել թէ իր ունեցածը կպահի, կամ իր զաւակներին կը թողնի:

Կապիտալիստ դասակարգը ինքնին հետզհետէ բաժանւում է երկու կարգի: Առաջին կարգը, որ յարատևօրէն աճում է, բոլորովին աւելորդ է ճարտարագործական կեանքի համար. նա ոչինչ չի անում և միայն իր ձեռքը հոսող յաւելեալ-արժէքի հետզհետէ շատացող քանակութիւնը ծախսում և վատնում է գեղեցկութեան մէջ. արտադրութեան նախկին սիստէմների ծոյլ դասակարգին հակառակ՝ նա ո՛չ գիտութիւնն է մշակում և ո՛չ էլ գեղարուեստները. նա իր հարստութիւնը մսխում է կա՛մ ապշօրէն կա՛մ անբարոյականօրէն: Միւս կարգը որ բաղկանում է այնպիսիներից, որոնք դեռ ևս աւելորդ չեն դարձած իրենց հաստատութիւնների մէջ, յարատևօրէն պակասում է. այս պակասելուն համեմատ էլ նրանց զրկութիւնը և՛ս աւելի ծանրանում է և իրենք և՛ս աւելի բեռնաւորւում են հոգսերով: Մինչդեռ առաջին կարգը փտում է բարոյական և նիւթական ծուլութեան մէջ, վերջինը բոլորովին ուժասպառ է լինում մրցակցական կռուի մէջ:

Երկուսի համար էլ անստուգութեան ուրուականը յարաճուն մի սպառնալիք է: Արտադրութեան նորագոյն սիստէմը թոյլ չի տալիս նոյն իսկ շահագործողներին, մինչև անգամ նրանց, որոնք իրենց բացառիկ մենաշնորհն են դարձրել այդ սիստէմի բոլոր առաւելութիւնները, — խաղաղութեամբ վայելելու իրենց աւարը:

ԳԼՈՒԽ Բ.

ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐ

Ինչպէս որ գոյութիւն ունեցող ընկերային ներկայ պայմանների ներքոյ՝ օրապահիկի անապահովութիւնը շատ մեծ է բոլոր դասակարգերի համար, միևնոյն կերպով էլ այդ անապահովութիւնը և՛ աւելի սաստկանում է այն դաշնապնելի պատճառով, որ պարբերաբար, անխուսափելի կերպով յառաջ են գալիս այն ժամանակ, երբ ճարտարագործական արտադրութիւնը յայտնի աստիճանի է հասնում։

Որովհետև այդ տագնապները կարևոր ազդեցութիւն են ունեցել տնտեսական մարմնոյն վրայ, վերջին տասնամեակների ընթացքում, և որովհետև այդ նիւթի նկատմամբ մտածմունքի ընդհանուր խառնաշփոթութիւն է տիրում, — ուստի այդ խնդիրը մասնաւոր ուշադրութեան է արժանի։

Աշխարհի վաճառականոցները տակն ու վրայ անող նորագոյն ընդարձակ տագնապները յառաջանում են գերարտադրութիւնից. իսկ գերարտադրութիւնը հետևանք է այն անդադարձութեան, որ արտադրութեան նորագոյն սիստէմից անբաժան է։

Գերարտադրութիւնը՝ այսինքն իրական կարիքից աւելի արտադրուիլը՝ կարող է պատահիլ որ և է սիստէմի ներքոյ։ Բայց նա որ և է վնաս չի հասցնի այն ժամանակ, երբ արտադրողները արտադրեն իրենց սեպհական կարիքներին բաւականութիւն տալու համար։ Եթէ, օրինակ, նախնական ժամանակներում մի ագարակապանի, գիւղական մի ընտանիքի հունձը շատ առատ լինէր՝ իր կարիքից աւելի, ապա նա աւելացած արտադրութիւնը կամբարէր և կպահէր սակաւահունձ տարիների համար. իսկ եթէ իր շտեմարանները լիքը լինէին, ապա նա մեացորդներով իր տաւարը կկերակրէր, կամ կթողնէր որ փչանար։

ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐԻ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Խնդիրը բոլորովին տարբեր է արտադրութեան նորագոյն սիստէմի մէջ։ Նախ՝ այժմ ոչ ոք չի արտադրում իր համար, այլ մի ուրիշի համար. ամէն ոք իրեն պէտք եղածը պիտի

գնի։ Բացի դրանից՝ ընկերութեան ամբողջական արտադրութիւնը մի որոշ յատակագծով յառաջ չի տարուում. ընդհակառակը ամէն արտադրողի իրեն է թողնուած գիտենալու համար պահանջի այն քանակութիւնը, որ կարող է լինել իր արտադրած ապրանքների համար։ Երկրորդ՝ արտադրութեան նորագոյն սիստէմի օրօք բացի դրամ լինելիք մետաղ (ազնիւ մետաղներ) արտադրողից՝ ուրիշ ոչ ոք կարող է գնել մի քիչ առաջ իր ծախածը։ Սրանք երկու արմատներ են, որոնցից յառաջանում են դաշնապնելը։

Այդ իրողութիւնը բացատրելու համար տանք մի ամենապարզ օրինակ։ Ենթադրենք թէ վաճառանոց են գալիս միատեղ մի դրամատէր, այսինքն ոսկեգործ, որ իր ձեռքին ունի քսան դօլլար ոսկի. մի գինեգործ՝ մի տակառ գինիով, մի ոստայնանկ՝ մի կապոց բամբակեայ զգեստներով և մի ջրաղացպան՝ մի բեռ ալիւրով։ Օրինակը աւելի պարզ անելու համար, ենթադրենք թէ այդ բոլոր ապրանքների արժէքը առանձին առանձին հաւասար լինի քսան դօլլարի, — արդիւնքը դրանից չի փոխուիլ — ու բացի ապրանք արտադրող այդ չորս հոգուց ուրիշ ոչ ոք չկայ վաճառանոցում։ Եւ թող ենթադրուի այնպէս, որ նրանցից ամէն մէկը գիտակից է միւսի կարիքներին, — գինեգործը իր գինին ծախում է ոսկեգործին և ստացած քսան դօլլարով գնում է ոստայնանկի ձեռքի մէջ եղած զգեստեղէնը և վերջը ոստայնանկը իր զգեստեղէնից ստացած դրամով գնում է ալիւրի բեռը։ Ամէն ոք տուն կերթայ գոհ։

Յաջորդ տարին այս չորսը նորից իրար են հանդիպում. իւրաքանչիւրն էլ կարծելով՝ որ իր ապրանքի համար նոյն պահանջը կար, ինչ որ առաջ։ Ենթադրենք թէ ոսկեգործը՝ անցեալ տարուայ նման, այս տարի էլ ցանկանում է ունենալ գինեգործի գինին, բայց գինեգործը կա՛մ կարիք չունի զգեստեղէնի, կա՛մ դրամը պահանջում է իր պարտքը վճարելու և աւելի նախընտրում է մի պատառոտուն շապիկ հագնել, քան նոր զգեստ շինել։ Այդ դէպքում՝ գինեգործը իր գբրպանն է պահում քսան դօլլարը և տուն է գնում։ Ի զուր ոստայնանկը սպասում է մի յաճախորդի, և այն պատճառի համար որ նա սպասում է, նոյն պատճառի համար է և՛ ջրաղացպանը։ Ոստայնանկի ընտանիքը կարող է անօթի լինել, նա շատ կցանկանար ունենալ ջրաղացպանի ձեռքում եղող ալիւրը։ Բայց նա արտադրել է բամբակի զգեստեղէնը, որի համար

պահանջ չկայ. և միևնոյն պատճառի համար, որ գգեստը „աւելորդ“ դարձաւ, նոյն պատճառի համար „աւելորդ“ դարձաւ և՛ ալիւրը։ Ոչ ոստայնանկը և ոչ էլ ջրաղացպանը որ և է դրամ ունին, որ իրենց ցանկացածը գնեն, որովհետև ինչ որ նրանք արտադրել են, այժմ թւում է մի ծայրայեղ արտադրութիւն, հետևաբար, միևնոյնն է և՛ միւս բոլոր ապրանքների նկատմամբ, որ արտադրուել են նրանց գործածութեան համար և որին նրանք կարիք ունին։ Բացատրութիւնը մի քիչ առաջ տանելու համար՝ աւելացնենք հիւսնի արտադրած սեղանը, որին ջրաղացպանը կարիք ունի, կօշկակարի արտադրած կօշիկը, որին հիւսնը կարիք ունի, և այլն, և այլն, սրանք բոլորը մնում են անփոխանակելի և անգործածելի — նրանք „գերարտադրուածներ“ են։

ԹԷ ԻՆՉՈՒ ՏԱԳՆԱՊԸ ԱՆԾԱՆՕԹ Է ԾԱԽՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՆԻՆ ՄԷՋ

Ճարտարագործական տագնապի բոլոր գլխաւոր գծերը պատկերացուած են վերևի օրինակի մէջ։ Յայտնի բան է, իրականութեան մէջ տագնապները այդպիսի պարզ յարաբերութիւններից չեն ծագում։ Ապրանքային արտադրութեան, ինչպէս և ծախու արտադրութեան, առաջին շրջաններում ամէն արտադրող՝ աւելի կամ նուազ՝ արտադրում էր ինքնասպառումի համար. ամէն ընտանիքի համար ծախու արտադրութիւնը կազմում էր միայն մի փոքր մասը իր ամբողջական ճարտարագործութեանը։ Վերևի բերուած օրինակի ոստայնանկը և ջրաղացպանը իւրաքանչիւրը մի կտոր հողի և մի քանի տաւարի տէր է, ուստի ամենայն համբերութեամբ կարող են սպասել, մինչև որ մի յաճախորդ գտնուի իրենց ապրանքների համար։ Ամենից ձախող հանգամանքում՝ նրանք կարող են մի կերպ ապրիլ, առանց նոյն իսկ այդ յաճախորդին։

Բացի դրանից, ծախու համար եղած արտադրութեան առաջին շրջաններում, փոքր վաճառականը ճանաչելը շատ դիւրին է, — արտադրութիւնը և սպառումը, ինչպէս և այն ժամանակուայ ամբողջ հասարակական կեանքը մէկ տարուանից մինչև միւսը գրեթէ չէր փոխուում։

Նախկին ժամանակներում, փոքր բնակավայրերի բնակիչներից ամէն մէկը ճանաչում էր միւսին և շատ լաւ էլ տեղեկութիւն ունէր իր հարևանների կարիքների և գնելու ընդունակութեանը մասին։ Շատ դէպքերում այդպիսի տեղերի ճարտարագործական մեխանիզմը էականապէս մնում էր միևնոյնը ամէն տարի. արտադրողների թիւը, աշխատանքի արտադրականութիւնը, արտադրութեան քանակութիւնը, սպառողների թիւը, նրանց կարիքները, նրանց տրամադրութեան տակը եղող դրամը — այս բոլորը շատ յամր կերպով էր փոխուում և ամէն փոփոխութիւն շատ շուտով էլ նկատուում էր և դիտողութեան առնուում։

Այս ամէնը ուրիշ կերպարանք է առնում, երբ աշխարհի պատմութեան թատերաբեմի վրան երևում է ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ։ Վաճառականութեան ազդեցութեան ներքոյ, ինքնասպառման համար եղած արտադրութիւնը բոլորովին վերջին տեղն է բռնում. ծախու ապրանքների անհատական արտադրողներ և առևտրականներ յառաջ են նետուում իրենց ապրանքները ծախելու, և որ կարևորն է, շուտով ծախելու։ Մի ապրանքի վաճառման յապաղումը և, որ աւելի վատն է, մի ապրանքի վաճառման արգիլումը, այժմ աղէտաբեր կլինի իր տիրոջ համար, այդ հանգամանքը երբեմն նոյն իսկ նրա կործանման պատճառը կարող է դառնալ։ Իսկ իրերի այս դրութեան հետ մէկտեղ՝ շատանում է և՛ վտանգը վաճառականութեան արագ ընթացքի դէմ։

ՆՈՐԱԳՈՅՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԻՊԻ ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ

Վաճառականութեան միջոցով՝ հեռաւոր տեղերում գտնուող բազմաթիւ վաճառանոցներ իրարու մօտիկ են բերուում և այդպիսով ընդհանուր վաճառանոցը մեծապէս ընդարձակուում է ու այլ ևս դժուար է լինում վերահսկողութեան տակ առնելու։ Այս անյարմարութիւնը և՛ս աւելի սաստկանում է մէկ կամ աւելի վաճառականական միջնորդների երևալովը, որոնք արտադրողի և սպառողի մէջտեղն են միջամխում՝ որպէս պահանջ վաճառականութեան։ Վերջապէս, վաճառականութիւնը թէև է տալիս ապրանքին, տեղափոխութեան միջոցների զարգացման հետ ձեռք ձեռքի տուած գործելով. այսօր բաւական է մի փոքր պահանջ, որպէսզի ամենամեծ քանակութեամբ ապրանք փոխադրուի որ և է տեղ։ Այս բոլոր պատճառները միասին առած՝ աւելի ու աւելի դժուար են դարձնում հասկանալու թէ մի տեղի համար օրքան ապրանքի

պահանջ կայ, կամ այնտեղ որքան ապրանքի մթերք կայ արդէն։ Վաճառագրութիւնների զարգացումը այս անստուգութիւններին վերջ չի կարող տալ։ Ընկերութեան ամբողջ անտեսական կեանքը աւելի ու աւելի կախումն է ունենում վաճառականական շահագիտական ձեռնարկներից (սպեկուլացիա), իսկ այս վերջիններս էլ միշտ աւելի ու աւելի ենթակայ են կորցնելու վտանգին։

Վաճառականը շահագիտական ձեռնարկներ անող (սպեկուլատոր) է սկզբից ի վեր. շահագիտութիւնը հնարուած չէ սակարանի մէջ. կապիտալիստի անհրաժեշտ մի պաշտօնն է նա։ Շահագիտական ձեռնարկներ անելով, այսինքն կանխապէս կռահելով մի ապրանքի համար լինելիք պահանջը. գնելով իր ապրանքները այնտեղ, որտեղ որ աւելի էժան կգտնի, այսինքն ուր այդ ապրանքների մթերքը չափազանց շատ է. և նոյն այդ ապրանքները ծախելով այնտեղ, ուր ս�է, այսինքն ուր այդ ապրանքները հազուագիւտ են, — վաճառականը այդպիսով նպաստում է մի քիչ կարգ մտցնելու արտադրութեան այն անյատակագիծ քաոսի մէջ, որ անհատապէս անկախ ձեռնարկողները առաջ են տանում։ Բայց նա կարող է սխալմունքի ենթարկուել իր հաշիւների մէջ, մասնաւորապէս նրա համար, որ նա շատ խորհելու ժամանակ չունի։ Աշխարհիս մէջ նա միակ վաճառականը չէ. հազարաւոր մրցողներ դարանի մտած՝ սպասում են օգտուել ամէն նպաստաւոր պատեհութիւններից. ով որ առաջին անգամն է նշմարում այդ պատեհութիւնը, նա էլ մրցանակը տանում է։ Այդպիսի պայմանների ներքոյ՝ արագութիւնը մի անհրաժեշտութիւն է, որ երկար ժամանակ չի տալիս խորհրդածելու, երկար հարցափորձեր անելու. կապիտալիստը պէտք է ռիսկ անի, չկայ ռիսկ, չկայ ոչինչ. միշտ աչքի առաջ ունենալու է կորցնելու պատահականութիւնը։ Հենց որ մի վաճառականցում որ և է մի ապրանքի մեծ պահանջ է նկատւում, — անմիջապէս ահագին բեռներով է թափւում այնտեղ, մինչև որ իր քանակութիւնը գերազանցում է վաճառականցի մարսողական կարողութիւնից։ Այն ժամանակ գները կոտրւում են, վաճառականը աւելի էժան պիտի ծախի, յաճախ նոյն իսկ վնասով, կամ իր ապրանքների համար ուրիշ վաճառականց պիտի փնտռի։ Իր վնասները այսպիսի ձեռնարկի մէջ երբեմն այնքան մեծ կարող են լինել, որ սնանկացում ի՛սկ կարող են պատճառել։

Ուր ծախու արտադրութեան նորագոյն սիստէմը լաւ զարգացած է և տիրապետող, տուած որ և իցէ վաճառականց կամ ծայրայեղօրէն է մթերուած ապրանքով, կամ անգոհացուցիչ կերպով։ Կապիտալիստ տնտեսագէտները կարծում են, որ այս ձևը մի իմաստուն և սքանչելի կանխատեսութիւն է։ Ողջմտութիւնը դրա հակառակն է ասում։ Ինչ էլ որ լինի, այդ բանը անխուսափելի է այն բոպէից սկսեալ, երբ ծախու արտադրութիւնը հասնում է կատարելագործութեան յայտնի աստիճանի և շարունակ գործադրութեան մէջ է մնում։ Բայց այս „իմաստուն“ կանխատեսութիւնը կարող է հասնել այն վախճանին՝ որ արտաքոյ կարգի մի որ և է պատճառի հետևանքով, մի վաճառականցի գերմթերումը ծայրայեղ կդառնայ և վաճառականների վնասներն էլ ծայրայեղօրէն ծանր կլինին. այնպէս որ նրանցից շատերը անընդունակ կլինին իրենց յանձնառութիւնները կատարելու, — այսինքն նրանք „կընկնին“։ Այդպիսի հանգամանքների ներքոյ՝ վաճառականական առաջին կարգի տագնապ՝ արդէն վերահաս է։ Այնքան ժամանակ, որքան որ փոքր արտադրութիւնն էր ճարտարագործութեան ձևի ղեկավարիչը, վաճառականական տագնապների ընդարձակութիւնը և ուժգնութիւնը միշտ կարելի էր սահմանափակել։ Ինչքան էլ որ մեծ լինէր պահանջը, այն ժամանակ անկարելի էր արագ կերպով շատացնելու հարստութեան այն ամբողջական գումարը՝ որ արտադրւում էր ընդհանուր վաճառանոցի համար։ Փոքր ճարտարագործութեան ղեկավարութեան ժամանակ՝ արտադրութիւնը անընդունակ էր արագ կերպով ընդարձակելու ապրանքի քանակութիւնը, չէր կարելի արտադրութիւնը ընդարձակել, նոյն իսկ շատ մեծ թիւ գործաւորներ բանեցնելով։ Սովորական հանգամանքների ներքոյ՝ որ և է համայնքի գործելու ընդունակ բոլոր անդամները կարող էին գործել։ Արտադրութիւնը կարելի էր ընդարձակել միայն գործաւորի կրած բեռը և՛ս աւելի ծանրացնելով, գործաւորի աշխատանքի ժամերը երկարացնելով, գրկելով նրան տօներից, և այլն. բայց հին՝ անցած ժամանակներում անկախ գործաւորը, գիւղացիները և ագարակապանը, որոնք դեռ ևս վտարուած չէին մեծ արտադրութեան մրցումից, այդ տեսակ չարատանջ աշխատանքի շատ մեծ ցանկացողներ չէին, և վերջապէս եթէ նրանք այդպիսի պարտաւորութեան տակ դրուէին, արտադրութեան տարբերութիւնը շատ մեծ չէր լինիլ, որովհետև աշ-

խատանքի արտադրականութիւնը այդ ժամանակ ոչինչ բան էր։

Կապիտալիստ մեծ արտադրութեան ծագումով այդ բոլորը փոխւում է։ Կապիտալիստ մեծ արտադրութիւնը ոչ միայն զարգացնում է այն բոլոր միջոցները, որոնք հնարաւոր են դարձնում վաճառականութեան ահագին քանակութեամբ ապրանքներ շեղջելու որ և է վաճառանոցում, նա ոչ միայն անջատ վաճառանոցները ընդարձակելով՝ բոլորին կապում է աշխարհի այն վաճառանոցի հետ, որ ամբողջ երկրագունդն է ընդգրկում, նա ոչ միայն բազմապատկում է արտադրողի և սպառողի միջև եղած միջնորդների թիւը, այլ նա հնարաւոր է դարձնում որ արտադրութիւնը վաճառականութեան բոլոր պահանջներին բաւականութիւն տայ ու ահագին ոստիւններով ընդարձակուի և աճի։

Ներկայումս նոյն իսկ այն հանգամանքը, որ գործաւորները ամբողջովին ենթակայ են կապիտալիստին — այսինքն կապիտալիստը կարող է իր կամքին համաձայն երկարացնելու նրանց աշխատանքի ժամերը, նրանց կիրակիները խլելու և նրանց գիշերային հանգստութիւնը կրճատելու — հնարաւորութիւն է տալիս կապիտալիստին աւելի մեծ արագութեամբ շատացնելու արտադրութիւնը, քան նախկին ժամանակներում այդ կարելի էր անել։ Բայի դրանից՝ ինկատի պէտք է առնել և՛ այն, որ այսօր գերաշխատանքի մեկ ժամը նշանակում է, աշխատանքի ներկայ արտադրականութեան շնորհիւ, անհունապէս աւելի մեծ արտադրութեան շատացումն՝ քան նախկին ժամանակներում։ Դեռ այս բոլորը չէ. այսօր կապիտալիստը հնարաւորութիւն ունի շատ կարճ ժամանակի մէջ իր գործը ընդարձակելու։ Վարկի շնորհիւ կապիտալը եղած է մի շատ առաձգական քանակութիւն։ Յաջողակ և շահաբեր վաճառականութիւնը վստահութիւնը շատացնում է, դրամ է դուրս բերում դէպի փողոցները, կարճացնում է դրամի շրջանառութեան համար պահանջուած ժամանակը և, հետևաբար, շատացնում է նրա գործունեութիւնը։ Բայց ամենից կարևորն այն է, որ կապիտալը [illegible] դարձաւորների [illegible] պահեստի [illegible]։ Այդ կերպով կապիտալիստը հնարաւորութիւն ունի, ցանկացած ամէն ժամանակին, իր գործարանը ընդարձակելու, գործաւորների թիւը աւելացնելու և արագօրէն իր արտադրութիւնը աճեցնելու ու ներկայացած ամէն նպաստաւոր պատեհութիւնից ծայր աստիճան օգտուելու։

Վերև ցոյց տրուեցաւ, որ մեծ արտադրութեան զեկավարութեան ներքոյ, ճարտարագործական կապիտալը աւելի ու աւելի միտումն ունի առաջին տեղը բռնելու և ամբողջ կապիտալիստ մեխանիզմը իր վերահսկողութեանը ենթարկելու։ Բայց կապիտալիստ արտադրութեան շրջանակի մէջ ի՛սկ ճարտարագործութեան մասնաւոր ճիւղեր կան, որ աշխատում են առաջին տեղը բռնելու. օրինակ երկաթի և մանելու ճարտարագործութիւնները։ Այն րոպէին, երբ այս ճարտարագործութիւններից մէկը մասնաւոր մի զարկ է ստանում — լինի այդ նոր վաճառանոցների բացուելով Չինաստանում, կամ երկաթուղային բազմատարած գծերի ձեռնարկելով — ապա նա ոչ միայն տարածւում է արագ կերպով, այլ իր ստացած զարկը հաղորդում է ամբողջ տնտեսական մարմնին։ Ուրիշ կապիտալիստներ շտապում են ընդարձակել իրենց ձեռնարկները, ձեռնարկում են նորերի, հում և փոխարինող (subsidiaire) նիւթերի գներն են աւելացնում, նոր ձեռքեր են գործի մէջ առնում և, այս բոլորի հետ միաժամանակ, կալուածահասը, շահն ու վարձագներն էլ են բարձրանում։ Ամէն տեսակ ապրանքների պահանջը շատանում է. ամէն տեսակ ճարտարագործութիւններ սկսում են զգալ ճարտարագործական բարգաւաճումը և այս ձգտումը վերջ ի վերջոյ դառնում է ընդհանուր։ Այդպիսի ժամանակներում թւում է թէ ամէն ձեռնարկ պէտք է յաջողութիւն գտնի. վստահութիւնը դառնում է ծայրայեղ. վարկը անսահման կերպով շատանում է. ով որ աճող շահի և կալուածահասի բաժին ունի, աշխատում է նրա մեկ մասը կապիտալի վերածել։ Ճարտարագործական գլխապտոյտը բոլորին էլ տիրապետում է։

ՃԱՐՏԱՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆԵՐՔՈՅ

Այս բոլորը կատարուած ժամանակին՝ արտադրութիւնը անհունապէս շատանում է և վաճառանոցի սկզբնական աճող պահանջը բաւականութիւն է ստանում։ Այնուամենայնիւ արտադրութիւնը կանգ չի առնում։ Մի արտադրող չի իմանում թէ միւսը ի՞նչ է անում։ Թէև՝ մի փոքր պայծառ ժամա-

նակամիջոցներում՝ մէկ կամ միւս կապիտալիստի մոքի մէջ կասկած կամ երկիւղ կարող էր ծագել, բայց այդ բոլորը շուտով տեղի են տալիս այն անհրաժեշտութեան առաջ, որով այդ կապիտալիստը աճապարում է իր ձեռքն ընկնող նպաստաւոր պատեհութիւններից օգտուել, որպէսզի մրցական արշաւանքից յետ չմնայ, որովհետև նա գիտէ, որ „դևը յետ մնացողներին է բռնում“։ Մինչ այս մինչ այն՝ ապրանքների աճող քանակութեան վաճառուիլը աւելի ու աւելի դժուար և յապաղալից է դառնում. վաճառականական տների մթերանոցները շարունակւում են լցուել, թէև դեռ խառնափնթորութիւնները մի կերպ առաջ են գնում։ Յետոյ գալիս է մի րոպէ, երբ վաճառականական հաստատութիւններից մէկը պէտք է վճարի այն ապրանքների գինը, որ գործարանատիրոջից ստացուել էին ամիսներ առաջ։ Ապրանքները դեռ չեն վաճառուած, դրամ էլ չկայ, նա չի կարող իր յանձնառութիւնները կատարել, ուստի և սնանկանում է։ Դրանից յետոյ կարգը գալիս է իր հաշիւների մէջ խարուող գործարանատէրին. նա, նոյնպէս, պարտքեր է արել, վճարելու մուրհակներ ունի և որովհետև իր պարտապանը չի կարողանում վճարել, ուստի ինքն էլ սնանկանում է։ Այսպէս, մի սնանկութեան հետևում է միւսը, յառաջանում է ընդհանուր կործանումն, մի քիչ առաջ կոյր վստահութիւնը փոխւում է հաւասարապէս կոյր երկիւղի, արհաւիրքը դառնում է ընդհանուր և կործանումը պատրաստ է։

Այդպիսի ժամկներում ճարտարագործական ամբողջ մեխանիզմը կեդրոնից է խախտւում, ընկնում է ամէն հաստատութիւն, որ չէ դրուած ամենապահով հողի վրայ։ Վերահաս դժբախտութեան են ենթարկւում ոչ միայն խարդախ ձեռնարկները, այլև բոլոր այնպիսիները, որոնք սովորական ժամանակներում հազիւ կարողանում էին իրենց գլուխը ջրից մի կերպ բարձր պահել։ Տագնապների ժամանակ, փոքր հողատէրերի, փոքր արտադրողների, փոքր վաճառականների և փոքր կապիտալիստների սեպհականազրկութիւնը աւելի շատ արագ կերպով է առաջ գնում։ Այդ ընդհանուր նաւաբեկութեան ժամանակ, միայն մանրաձկները չեն որ քշւում են, այլ նրանց հետ շատ մեծերն էլ. շատ քիչ մարդ կարող է ապահով լինել, որ ինքն էլ դէպի ընդհանուր կործանումն չի

երթալ։ Բնականաբար՝ այդ ընդհանուր կործանումից յետոյ կանգուն մնացող կապիտալիստները հարուստ աւար են ձեռք ձգում։ Մի տագնապի ժամանակ երկու կարևոր բան են տեղի ունենում. առաջին՝ „մանրաձկները“ի, „փոքր մարդոց“ սեպհականազրկութիւնը. երկրորդ՝ արտադրութեան կեդրոնացումը փոքրագոյն ձեռքերի մէջ։ Այդպիսի ժամանակներում հսկայական հարստութիւններ աւելի դիւրութեամբ են ձեռք բերւում։

Որովհետև շատ քչերն են, դեռ խնդիր է թէ մէկը կլինի, որ կարող են ասել թէ այդ տագնապներից յետոյ իրենք կարող են վերապրել, ուստի նորագոյն արտադրութեան սարսափը բաժին է ընկնում շատերին. այդպիսի ժամանակներում օրապահիկի անապահովութիւնը, զգացուած կարիքը, անառակութիւնը և ոճիրը հասնում են վրդովեցուցիչ համեմատութիւնների։ Հազարաւորներ մեռնում են անօթութիւնից և ցրտից — և զարմանալին այն է, որ նրանք մեռնում են, որովհետև շատ մեծ քանակութեամբ հագուստ, կերակուր, բնակարան և ուրիշ հարստութիւններ են արտադրել։ Այդպիսի ժամանակներում աւելի պարզ կերպով երևան է գալիս այն իրողութիւնը՝ թէ նորագոյն արտադրիչ ոյժերը աւելի ու աւելի անհաշտելի են դառնում ծախու արտադրութեան սիստէմի հետ. և թէ՝ արտադրութեան միջոցների մասնաւոր սեպհականութիւնը ամենամեծ անէծքն է ամէնքի համար — նախ՝ սեպհականազուրկ դասակարգի և ապա նոյն իսկ իրենց՝ սեպհականատէրերի։

ՏԱԳՆԱՊՆԵՐԸ ՄՇՏԱԿԱՆ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ

Կապիտալիստ սիստէմի լիակատար զարգացման հետ, այսինքն ամբողջ հարստութեան յարաձուն կեդրոնացումով աւելի նուազ ձեռքերում, տագնապը առաջուան նման „պարբերական պատահմունք“ լինելուց դադրել է։ Այժմ ամէն տարի կանոնաւորապէս պատահող սնանկութիւնների մէկ քառորդը եթէ պատահէր առաջին ժամանակներում — ապա ժողովրդական ընդհանուր սարսափ կտիրէր. այսօր աւելի մեծ չափով և ծանր սնանկութիւններ են պատահում, բայց ժողովրդի կողմից աննշմարելի կերպով անցնում են. թէև դրանով չէ ասում թէ այդ սնանկութիւնների անհամար զոհերն էլ այդ

չեն զգում. արիւնհոսութիւնը հիմայ քրոնիկական է. պաքնապը դարձել է հղիական իր բոլոր սարսափներով միասին։

Հաւանականօրէն այս հանգամանքն աչքի առաջ ունենալով է — այսինքն այն՝ թէ տագնապի երևոյթը „պարբերական“ լինելուց դադրած է — որ մի քանի անձեռնհաս և ծանծաղամիտ տնտեսագէտներ յայտարարեցին՝ թէ Թրըստը բոլորովին պիտի վերացնի տագնապները։ Դա բոլորովին սխալ է։

Որպէսզի արտադրութիւնը կանոնաւորուի մեծ սէնդիկատների և Թրըստների ձեռքով, ամենից առաջ հարկաւոր է որ նրանք իրենց վերահսկողութեան տակն առնեն ճարտարագործութեան բոլոր ճիւղերը և կազմակերպեն ԳԼՈՒՂԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ վրայ, և այդ էլ այն բոլոր երկրներում, ուր կապիտալիզմը իր թևերն է տարածել։ Մինչև ցարդ միջազգային ո՛չ մի յաջող Թրըստ չի երևացել ճարտարագործութեան գլխաւոր մի ճիւղի մէջ. Standard Oil Trust ը միայն յայտնի աստիճանի դրան կարող է մօտենալ։ Միջազգային Թրըստներ դժուար է կազմակերպել և աւելի էլ դժուար՝ նրանց միասին պահելը։ Աւելի քան քառասուն տարի առաջ Կարլ Մարքսը մատնանիշ է արել թէ միայն մրցումը չէ որ խրախուսում է մենաշնորհը, այլ մենաշնորհն էլ խրախուսում է մրցումը։ Որքան որ մի Թրըստի ստացած շահը շատ լինի. այնքան էլ աւելի մեծ կլինի վտանգը այն կղզիացած և զօրաւոր կապիտալիստի համար, որ մրցման նպատակով մի ձեռնարկ է անում, որպէսզի շահի կտորներ իր համար էլ փրցնի. և, բացի դրանից, որքան որ առևտուրը աւելի է բարգաւաճում, այնքան էլ աւելի մեծ է լինում Թրըստական ձեռնարկի իւրաքանչիւր անդամի խոյս տալու և յետ քաշուելու միտումը այն սեղմումներից, որ Թրըստը դրել է նրա վրայ։ Երբ գները ընկնում են, մեծ է մտահոգութիւնը դէպի Թրըստութիւնը. երբ գները բարձրանում են, ամէն արտադրող ջանք է անում պատեհութիւնից օգտուել և որքան կարելի է վաճառանոցը շատ ապրանք թափել։ Բայց սա իր սահմանները ունի. և վերջապէս գալիս է մի կէտ, երբ Թրըստը դառնում է մշտական։ Թրըստը շատ դէպքերում անկարող կլինի գերարտադրութեան առաջն առնել։ Գերարտադրութեան նկատմամբ՝ Թրըստի գլխաւոր միսսիան է ոչ թէ նրա առաջն առնել, այլ նրա աղէտալի հետևանքները կապիտալիստների ուսերից գործաւորներին և սպառողներին փոխադրել։ Նրա միսսիան է օգնել մեծ կապիտալիստներին՝ դիմադրաւելու տագնապների փոթորիկին, ժամանակաւորապէս սահմանափակելու արտադրութիւնը, գործաւորներին գործից արձակելու և ընդհանուր ծախքերը կորելու՝ առանց սակայն, շահին մեծապէս վնաս բերելու։ Մի երկրի սահմանների մէջ Թրըստի կազմակերպումը և պահպանումը պաշարող դժուարութիւնները մեծապէս նուազում են. Թրըստը ծաղկում է և կարող է ծաղկիլ միայն այնտեղ. սակայն ուրիշ է խնդիրը Միջազգային Թրըստի նկատմամբ։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹՐԸՍՏԸ ԶԻ ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ՏԱԳՆԱՊԸ

Բայց ենթադրենք. պատահաբար. թէ գլխաւոր ճարտարագործութիւնները յաջողապէս կազմակերպուէին որպէս միջազգային Թրըստներ այնպիսի խիստ կարգապահութեան ներքոյ. որ յաջող ժամանակների տարբալուծիչ ազդեցութեանը ընդդիմադրէին։ Ի՞նչ կլինէր այն ժամանակ դրա վախճանը։ Կապիտալիստների միջև եղած մրցումը միայն դէպի մի կողմ կիսոխադրուէր։ Որքան որ ճարտարագործութեան միևնոյն ճիւղի արտադրողների միջից աւելի է չքանում կատարեալ մրցումը, այնքան էլ հակամարտութիւնը աւելանում է նրանց և. ուրիշ ապրանքներ արտադրողների միջև, որոնք կախումն ունին Թրըստի արտադրածներից։ Որքան որ միևնոյն ճարտարագործութեան մէջ գտնուող արտադրողների միջև Թշնամութիւնը դադարում է, նոյնքան էլ այդ Թշնամութիւնը խրստանում է արտադրողների և սպառողների միջև։ Սակայն այնպէս էլ է պատահում, որ ամէն արտադրող միևնոյն ժամանակ և՛ սպառող է։ Բամպակի գործարան ունեցողը, օրինակի համար, իր անձնական և մասնաւոր պէտքերից բացի, սպառող է բամպակի, ածուխի, մեքենայականութեան, քարիւղի և բամպակի գործարանին պէտք եղող ուրիշ կարիքների։ Կարճ խօսքով լիակատար միջազգային Թրըստութիւնը ոչ միայն պատճառ կդառնայ, որ կապիտալիստ դասակարգերը իրարուց կը բաժնուին որպէս առանձին անհատներ, այլ նրանք կդառնան առանձին ցեղեր, որոնք իրարու դէմ դանակի կռիւ կմղեն։

Այսօր ամէն առանձին կապիտալիստ ամապարում է արտադրելու այնքան շատ, որքան որ կարող է՝ որպէսզի վաճառանոցի մէջ թափի այնքան շատ ապրանք, որքան որ կարող է, որով-

հետև որքան շատ ապրանք, այնքան էլ շատ շահ. վաճառանոցի ընդարձակութեան իր գնահատութիւնը և իր կապիտալը մեծացնելու սեպհական ընդունակութիւնն է, որ սահմանափակում է իր շատ արտադրելու ցանկութեան չափը։ Ուրիշ կողմից, երբ թրքստների սիստեմը ընդհանուր կդառնայ, այն ժամանակը մենք չենք տեսնիլ արտադրութեան լաւագոյն կանոնաւորումը և դրա հետ էլ միասին տագնապների ընդհատումն, ինչպէս որ մեր ներկայ ընկերային կարգը արդարացնողներից ոմանք մեզ կուզէին այդպէս հաւատացնել, այլ ինչ որ մենք այդ ժամանակը կտեսնենք, դա կլինի իւրաքանչիւր թրքստի ընդհանուր փութկոտութիւնը՝ արտադրելու այնքան նոաաղ, որքան կարելի է. որովհետև որքան քիչ լինի մթերքը, այնքան էլ աւելի կլինի գինը։ Վաճառականները որ՝ առաջ, ինչպէս և այսօր, սովորութիւն ունին իրենց ապրանքների մի մասը ոչնչացնել վաճառանոցի գերմթերուած ժամանակին, որպէսզի իրենց մնացած ապրանքները աւելի բարձր գնով ծախեն, — այդ սովորութիւնը, ահա, այն ժամանակ բոլորովին ընդհանուր պիտի դառնայ։ Ակներև է սակայն, որ ընկերութիւնը այն ժամանակ չի կարող իր գոյութիւնը շարունակել։ Երբ ամէն թրքստ ջանայ նուազագոյն արտադրութեան, ընդհակառակը բոլոր միւսները կջանան ստիպել այդ թրքստներին՝ որոնց արտադրածներին կարիք ունին՝ որպէսզի նրանք գերարտադրութեան մէջ մտնեն։ Այդ նպատակին հասցնող շատ միջոցներ կլինին։ Ամենապարզ միջոցը մէկ թրքստի համար՝ կլինի իր սպառումն աւելի յապաւել, քան մի ուրիշ թրքստ կյապաւի իր արտադրութիւնը. ուրիշ միջոցը կլինի գիտութեան դիմել, որպէսզի նա մատակարարի այն ապրանքի կարիքը, որի արտադրութիւնը թրքստ է եղած և յապաւուած է. երրորդը այն կլինի, որ թրքստ եղած գործատները իրենք ձեռնարկին արտադրելու, ինչ որ իրենք կարիք ունին։

Երևակայիր թէ պղնձի հանքերը թրքստ են եղած և այդ կերպով պղնձի արտադրութիւնը նուազած է ու գները բարձրացած են։ Ի՞նչ կլինի դրա վախճանը։ Արտադրողներից ոմանք՝ որոնց միակ զբաղումն է պղինձ սպառել, իրենց գործը կդադրեցնեն և կուզեն աւելի լաւ ժամանակի սպասել. ուրիշներն էլ կաշխատեն փնտռել ուրիշ մի այնպիսի մետաղ, որ կարողանար պղնձի տեղը բռնել. և միւսներն էլ կջանան որ իրենք պղնձի հանքեր գտնեն կամ՝ նրանց վաճառուիլը

խրախուսեն և այդպիսով իրենց ապատեն Պղնձի Ակումբից (Copper Ring)։ Այս բոլորի վախճանը կլինի թրքստի պայթումը և սնանկացումը, և այն ժամանակ մենք կունենանք մի ուրիշ տագնապ։

Թրքստը չի ոչնչացնում տագնապը։ Միակ ազդեցութիւնը որ նա այդ ուղղութեամբ կունենայ, դա կլինի տագնապին մի ուրիշ ձև տալ — բայց ոչ թէ լաւագոյն ձև։ Սնանկութիւնները վերջ չեն գտնիլ. միակ տարբերութիւնը այն կլինի, որ նրանք իրենց շրջանը կընդարձակեն և կտարածուին ոչ միայն մասնաւոր կապիտալիստների վրայ, այլ միանգամից նրանց ամբողջ շարքի վրայ. և նրանց հետ էլ միասին, յայտնի բան է, կկործանեն այն մեծ զանգուածներին, որոնց գոյութիւնը կախուած ունի նրանցից։ Հետևաբար, թրքստը չի կարող տագնապները մէջտեղից վերցնել. ընդհակառակը, ինչ որ նա կարող է անել, այդ այն է՝ որ նա կյառաջացնի այն տեսակ տագնապներ, որոնք աւելի կործանիչ կլինին, քան թէ մի ուրիշ բան, որի փորձը մինչև ցարդ մարդկութիւնը տեսած է։

Երբ կհասնի այն կէտին, որ բոլոր թրքստները միանալով մէկ կդառնան և բոլոր կապիտալիստ ազգերի արտադրութեան ամբողջ մեքենայականութիւնը միայն մէկ ձեռքի մէջ կկենդրոնանայ, այսինքն՝ երբ արտադրութեան միջոցների մասնաւոր սեպհականութիւնը իրականօրէն վերջ կգտնի, — ահա այդ ժամանակն է միայն, որ թրքստութիւնը կարող է տագնապները ոչնչացնել։ Բայց, դրա հակառակը, ճարտարագործական գարգացման մի յայտնի աստիճանից յետոյ՝ տագնապը — լինի „պարբերական“ կամ ներկայ „մշտական“ կամ աւելի ծանր ձևով — անխուսափելի է. որքան որ արտադրութեան միջոցների մասնաւոր սեպհականութիւնը շարունակուի։ Վերջացնել տագնապները, մասնաւոր սեպհականատիրութեան վատ կողմերը միայն ջնջելով ու ինքնին մասնաւոր սեպհականատիրութիւնը իր ամբողջութեան մէջ թողնելով՝ — դա ո՛չ մի կերպ կարելի չէ։

ԳԼՈՒԽ Թ.

ՔՐՈՆԻԿ ԳԵՐԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Պարբերական տագնապների և նրանց մշտական արտայայտութիւնների հետ միասին, ժամանակաւոր գերարտադրութեան շրջանների վերակրկնութեան և նրանց հետ միացած հարստութեան կորստի և այժի վատնումի հետ միասին — ՔԵՔԱՐՊՈՊՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՐԱԳԼՈՒՄԸ ԱՃՈՒՄ Է, ԳԱՆՈՒՄ Է ԵՐԵՆԿ, ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՅԺԵՐԸ ԵՐԵՆԿԿԱՆ Է ԸՆԴ ԼԱՊՈՒՄ ԵՆ ԵՆԹԱՐԿՈՒՄ։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԱՐԱՃՈՒՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԳԵՐԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մենք տեսանք որ արտադրութեան միջոցների մեքենայականութեան մէջ կատարուած յեղաշրջումը անընդհատօրէն առաջ է գնում և հետզհետէ բազմանում են նրա արշաւանքին ենթարկուող դաշտերը։ Կապիտալիստ մեծ արտադրութիւնը տարէց տարի ճարտարագործութեան նոր ճիւղեր, նոր դաշտեր է նուաճում և, հետևաբար, աշխատանքի արտադրականութիւնը անդադար և յարաճուն երագութեամբ աճում է։ Սրա հետ միատեղ անընդհատ կերպով յառաջ է գնում նոր կապիտալի կուտակումը։ Որքան որ սոսկական բանուորի շահագործուիլը աւելի ուժգին լինի և որքան որ շահագործուող աշխատաւորների թիւը շատ լինի, այնքան էլ աւելի կշտանայ յաւելեալ-արժէքի քանակութիւնը և հարստութեան այն զանգուածը, որ կապիտալիստ դասակարգը կարող է մի կողմ դնել և գործածել որպէս կապիտալ։ Հետևաբար, կապիտալիստ սիստէմին դադար առնել վիճակուած չէ, իր յարատև ընդարձակուիլը, ինչպէս և իր շուկայի յարատև ընդարձակումը, կեանքի և մահու խնդիրներ են, կապիտալի հարստակ

՝ ՊԱՀԱՆՋԵԼԸ, ՀԱՄԱՐ հանդարտ կանգնելը կնշանակէ մեռնել։ Մինչդեռ առաջ, ձեռարուեստի և փոքր հողատիրական սիստէմի օրոք, ամբողջ մի երկար արտադրում էր հարստութեան մի որոշեալ քանակութիւն, որը սովորաբար աճում էր միայն այն ժամանակ, երբ աճում էր ազգաբնակչութիւնը. ընդհակառակը՝ կապիտալիստ սիստէմը սկզբից ի վեր յենում է արտադրութեան

յարատև աճման վրայ. ամէն անգամ, երբ կապիտալիստ արտադրութիւնը կանգ է առնում, դա ցոյց է տալիս ընկերային մի հիւանդութիւն, որ այնքան աւելի անտանելի և դժուարին է լինում, որքան որ նա երկար է տևում։ Վաճառականների պարբերական ընդարձակուիլը յաճախ պարբերական խեթան է հանդիսանում արտադրութեան շատանալուն, դրա հետ միասին էլ կայ և այն՝ որ նոյն իսկ արտադրութեան վրայ մշտական մի ճնշումն կայ, ինքն իրեն ընդարձակուելու։ Այդ ճնշումը անբաժան է արտադրութեան կապիտալիստ սիստէմից և ոչ թէ վաճառականների ընդարձակուիլն է միայն, որ պատճառ է դառնում այդ ճնշումին, այլ՝ ընդհակառակը, կապիտալիստ սիստէմը ինքն է ստիպողը, որ իր վաճառականները աւելի ընդարձակուին։

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐԱՅԻՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԳԵՐԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Բայց վաճառականների այս ընդարձակուելուն մի սահման կայ։ Վերջին քսան տարուայ ընթացքում՝ վաճառականների այդ ընդարձակուիլը նախկին ժամանակների նպաստաւոր հանգամանքները չունեցաւ. փրաւ է որ վաճառականները միշտ ընդարձակւում են, բայց, մինչդեռ մի կողմից արտադրութիւնը միտում ունի մեծ արագութեամբ աճելու, միւս կողմից՝ վաճառականների ընդարձակութիւնը շատ աւելի դանդաղ կերպով է առաջ գնում։

Ճշմարիտ է դարձեալ և այն, որ անհուն է դաշտը, որի վրայ կապիտալիստ արտադրութիւնը կարող է ընդարձակուիլ. նա անցնում է տեղական և ազգային սահմաններից, իրաք ամբողջ երկրագունտը նրա վաճառականն է. բայց իրաք էլ կապիտալիզմը փոքրացրել է երկրագունտի տարածութիւնը։ Մի այն հարիւր տարի սրանից առաջ կապիտալիստ ճարտարագործութեան վաճառականը բաղդատաբար սահմանափակուած էր և գրեթէ ամբողջապէս Անգղիայի մենաշնորհն էր դարձած։ Բայց կապիտալիստների գործունէութիւնը և կորովը այնքան մեծ էր, նրանց օժանդակիչները և դրդապատճառները այնքան շատ էին և նրանց տրամադրութեան տակ գտնուող միջոցները այնքան հսկայական, որ շատ չանցաւ, գրեթէ աշխարհիս վրայի բոլոր երկրները բռնադատութեան ենթարկուեցան ոչ միայն անգղիական, այլ բոլոր կապիտալիստ-

ազգերի արտադրութիւնների կողմից, այնպէս որ այսօր ո՛չ մի ուրիշ վաճառանոց ազատ չէայ թողնուած, բացի այնպիսի վաճառանոցներից, որոնցից ուրիշ բան չի կարելի քաղել, եթէ ոչ ջերմ և մոծակների խայթոց։

Տեղափոխութեան զարմանահրաշ զարգացումը տարէց տարի աւելի դիւրին է դարձնում վաճառանոցների շահագործումը՝ բայց այդ միտումը հակակշռւում է այն հանգամանքով, որ վաճառանոցը արագօրէն փոփոխութեան է ենթարկւում, նոյն իսկ այն երկրներում, որոնց ժողովուրդը հասած է քաղաքակրթութեան մի յայտնի աստիճանի։ Ամէն տեղ կապիտալիստ մեծ արտադրութեան ապրանքները սպանում են տեղական փոքր արտադրութիւնը և արհեստաւորներին ու գիւղացիներին պրոլետարներ են դարձնում։ Այս ձևափոխութիւնը երկու կարևոր հետևանքներ է յառաջացնում այն վաճառանոցներում, որոնց վրայ որ յոյս է դրուած կլանելու կապիտալիստ ճարտարագործութեան յաւելեալ-արտադրութիւնները. առաջին՝ նա նուազեցնում է ազգաբնակչութեան գնել կարենալու ոյժը և դրանով էլ նուազեցնում է տուած վաճառանոցում ներմուծուած ապրանքների աճող քանակութեան կլանելու ընդունակութիւնը։ Երկրորդ՝ ինչ որ աւելի կարևոր է, նա այդ տեղերում կապիտալիստ արտադրութեան սիստէմի հիմունքն է դնում՝ գոյութիւն տալով պրոլետարիատ դասակարգին. մի դասակարգ՝ որ առաջ այդպիսի վայրերում գոյութիւն չունէր։

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՓՈՐՈՒՄ Է ԻՐ ՍԵՊՀԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Այսպէս. կապիտալիստ մեծ արտադրութիւնը ինքը փորում է իր գերեզմանը։ Իր զարգացման մէջ յայտնի աստիճան առաջ երթալուց յետոյ՝ վաճառանոցի ամէն նոր ընդարձակուիլը համապատասխան է նոր մրցակից երևան բերելուն։ Ներկայումս Միացեալ-Նահանգների կապիտալիստ մեծ արտադրութիւնը, որ հազիւ մէկ սերնդի հասակ ունի, ջանք է անում ո՛չ միայն իրեն ազատելու եւրոպական իր մրցակցից, այլ նա կատաղի ձիգեր է թափում ամբողջ ամերիկեան ցամաքի վաճառանոցը յափշտակելու, ինչպէս և ամբողջ աշխարհի։ Ռուսաստանի նորափթիթ կապիտալիստ ճարտարագործութիւնը ձգտում է միակ մատակարարողը լինել Ռուսաստանի տիրապետութեան տակը եղած եւրոպական և ասիական ընդարձակ երկրներին։ Արևելեան Հնդկաստանը, Չինաստանը, Ջապոնիան, Աւստրալիան դառնում են ճարտարագործական երկրներ և ուշ կամ կանուխ նրանք ընդունակ կլինեն իրենց կարիքներին բաւականութիւն տալու՝ իրենց սեպհական ճարտարագործութեամբ։ Կարճ խօսքով հետզհետէ վերահաս է դառնում այն բոպէն, երբ ճարտարագործական երկրների վաճառանոցները այլ ևս չեն կարող ընդարձակուիլ և կսկսին իրարու սեղմել։ Երբ այդ ազդեցութիւնը կսկսի զգալի լինիլ, դա նախանշան կլինի կապիտալիստ ընկերութեան ամբողջական սնանկութեանը — մի աշխարհաւերութիւն, որ ամբողջ աշխարհը անդնդասոյզ կանէ, եթէ Սոցիալիստ Յեղափոխութիւնը չկանխէ և Սոցիալիստ Հասարակապետութիւնը չհաստատուի։

Բաւականին երկար ժամանակից ի վեր վաճառանոցի ընդարձակուիլը զուգընթացաբար առաջ չի գնում կապիտալիստ արտադրութեան պահանջների հետ. վերջինս, հետևաբար, հետզհետէ աւելի խոչնդոտների է հանդիպում և շատ դժուարութեամբ միջոց է գտնում իր ունեցած արտադրիչ ոյժերը լիակատար կերպով զարգացնելու։ Հետզհետէ աւելի է կարծանում ճարտարագործական զօրեղ գործունէութեան անջրպետը, միջոցը, տագնապների տևողութիւնը հետզհետէ երկարանում է, մինչև որ զօրութենապէս դրանք դառնում են շարունակական. — գերարտադրութիւնը տակաւ առ տակաւ միջոցական ընորոշիչ գիծն է լինում ներկայ սիստէմի։

Հենց այստեղից էլ յառաջանում է այն, որ հետզհետէ շատանում է արտադրութեան այն միջոցների քանակութիւնը, որ ոչ-բաւականաչափ գործածական կարող է լինիլ կամ ըստիպուած է բոլորովին անգործածելի մնալ. այս կերպով հետզհետէ աւելի է դիզւում հարստութեան այն քանակութիւնը որ վատնուելու է գնում և հետզհետէ արհաւրալից է դառնում աշխատանքի ոյժի այն քանակութիւնը, որ ստիպւում է պարապ մնալ. ոչ միայն այս վերջին տեսակին են պատկանում անգործների այն բազմութիւնները, որոնք արագօրէն աճելով անկերպարանի մի վտանգ են դառնում. այլ այդ տեսակի մէջ ընկերային մի վտանգ են դառնում. նոյնպէս, առաջին՝ ընկերային մակաբոյծների պիտի հաշուել, նոյնպէս, առաջին՝ ընկերային մակաբոյծների յարաճուն այն խումբը, որոնք արտադրութեան բոլոր ճամբաները իրենց առաջը փակ գտնելով՝ աշխատում են պահպա-

նել իրենց եղկելի գոյութիւնը, դանադան այնպիսի զբաղումների միջոցով, որոնցից շատերը բոլորովին աւելորդ են և շատերն էլ հակառողջական՝ օրինակ, դանադան փոքր միջնորդներ, փերեզակներ, գինեվաճառներ, գործակալներ, առևտրական ճանապարհորդներ, կաւատներ, և այլ այդպիսիներ։ Երկրորդ՝ մարդկային այն մեծ խումբը, որ կարելի է մականուանել մուրացկան–պրոլետարներ (լումպեն–պրոլետար), կամ խղկամարդիկ, որոնք իրենց անունը առնում են իրենց անդամների ոմանց բնակարաններից, ինչպէս և բոլորի էլ մըտաւոր տրամադրութիւններից, որպիսիք են՝ վերին և ստորին աստիճանի քսակահատներ և դրամաշորթներ, լաւ և գէշ հագնուած ոճրագործներ, ընկերային „բարձր“ եւ ստորին խաւերի մէջ ապրող անառակներ։ Երրորդ՝ այն խումբերը, որոնք ունևոր դասակարգին են կպած որպէս „պրոֆէսիոնալ“ և անձնական ծառաներ, — ինչպէս են տաճարապետներ, սպասարկուներ, սպասաւորներ, կառապաններ, ծառաներ, աղախիններ, մասնաւոր պահապաններ և ոչ-աննշան թիւ փաստաբանների, բժիշկների, քարտուղարների, „անային ուսուցիչների“ և ուրիշ շատ այդ տեսակներ, ու վերջապէս գինուորներ, զօրաբանակներ։ Այս բոլորը ընկերային մի անկարելիութիւն կլինէին, եթէ գոյութիւն ունեցող գերարտադրութիւնը չլինէր, որ այդ ամէնքին անպէտք է դարձրել ճարտարագործական նպատակի համար։

Կապիտալիստ ընկերութիւնը սկսել է խեղդուել իր իսկ սեպհական աւելորդ արտադրութիւններից, նա հասել է այն կէտին, երբ այլևս աւելի հեռու և աւելի կատարեալ զարգացման չի կարող մղել այն արտադրիչ ոյժերը, որոնց ինքն էր ասպարէզ հանել։ Որպէսզի այդ ընկերութիւնը բեկորների չը բաժնուի, նա ստիպուած է պարապութեան մէջ պահել արտադրիչ ոյժերի մի մեծ քանակութիւն և թոյլ տալ որ արտադրուած հարստութեան մի մեծ քանակութիւն ի զուր վատնուի։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԼՐԱՑՐԵԼ Է ԻՐ ՄԻՍՍԻԱՆ

Կապիտալիստ սիստէմի ներմուծումը (այսինքն այն՝ որ փոքր արտադրութեան և աշխատանքի գործիքների անհատ գործաւորների սեպհականութիւնը լինելուն փոխանորդեց կապիտալիստ մեծ արտադրութիւնը և աշխատանքի գործիքների փոքրաթիւ անհատների սեպհականութիւն դառնալով՝ նրանց գործաւորները սեպհականազուրկ պրոլետարներ եղան) միջոց էր, որով աշխատանքի արտադրիչ ոյժերը անհունապէս պիտի աճէին և ազատուէին, թէ՛ ճարտարագործութեան և թէ՛ երկրագործութեան մէջ, այն նեղ կապերից, որով նրանք շըղթայուած էին փոքր արտադրութեան սիստէմի օրոք։ Այդ բանը լրացնել, կատարելը կապիտալիստ դասակարգի պատմական միսսիան էր և նա իր գործը կատարեց անլուր տանջանքների ենթարկելով մարդկային էակների ահագին զանգուածներ, որոնց նա սեպհականազրկեց և շահագործեց. սակայն նա լրացրեց, վերջացրեց իր միսսիան։ Դա պատմական կատարեալ մի անհրաժեշտութիւն էր. ինչպէս և անհրաժեշտութիւններ էին այն երկու անկիւնաքարերը, որոնց վրայ որ նա բարձրացած էր. առաջինը՝ ապրանքային արտադրութիւնը— ծախու արտադրութեան սիստէմը. երկրորդը՝ աշխատանքի գործիքների մասնաւոր սեպհականութիւնը։

Բայց որքան որ կապիտալիստ սիստէմը և նրա հիմունքները մի ժամանակ անհրաժեշտ էին, այսօր այլևս նրանք բնաւ անհրաժեշտ չեն։ Կապիտալիստ դասակարգի գործը, նրա կատարած պաշտօնը այժմ անցած է վարձու գործաւորներին։ Կապիտալիստների ահագին մեծամասնութիւնը հիմայ ուրիշ ոչինչ չէ անում, եթէ ոչ միայն սպառում այն՝ ինչ որ ուրիշները արտադրում են. այսօր կապիտալիստը նոյնքան աւելորդ մի էակ է, որքան աւելորդ էր, սրանից հարիւր տարի առաջ, աւատական վեհապետը։

Ո՛չ, դեռ աւելին կայ. այսօր կապիտալիստը նոյնքան խոչընդոտ է դարձել մարդկային ազգի և՛ս աւելի զարգանալուն, առաջ երթալուն, որքան որ այդ տեսակ խոչընդոտ էր, հարիւր տարի սրանից առաջ, աւատական վեհապետը։ Շատ վաղուց է, որ աշխատանքի գործիքների մասնաւոր սեպհականութիւնը այլևս ամէն արտադրողի չի տալիս իր աշխատանքի արտադրածը և չի երաշխաւորում նրա ազատութիւնը։ Այսօր, ընդհակառակը, նա պատճառ է դառնում, որ ընկերութիւնը արագօրէն գահավիժում է դէպի այն կէտը, երբ կապիտալիստ ազգերի ամբողջ ազգաբնակչութիւնը կզրկուի թէ՛ իր սեպհականութիւնից և թէ՛ իր ազատութիւնից։ Այսպէս, ինչ որ մի ժամանակ ընկերութեան հիմունքն էր — միջոցները որ

սկզբում նպատակ ունէին ընկերութեան մէջ եղած արտադրիչ ուժերի զարգացումը առաջ մղելու — այժմ դարձել է գլխաւոր դրդապատճառը, որ հարկադրում է ընկերութեանը իր արտադրիչ ուժերը փչացնելու և ի զուր վատնելու։ Այսպէս, արտադրութեան գործիքների մասնաւոր սեպհականութեան սիստէմը ամբողջապէս կորցրել է իր սկզբնական բնաւորութիւնը։ Նա ո՛չ միայն անէծք է դարձել փոքր արտադրողի, այլ և ամբողջ ընկերութեան համար. փոխանակ ընկերային զարգացման խթանը լինելու, նա պատճառ է դարձել ընկերութեան անկմանը և առիթ՝ նրա վերահաս սնանկութեանը։

ՍՈՑԻԱԼԻՍՏ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՈՒՍԱՓԵԼԻ

Այսօր այլևս խնդիրը այն չէ, թէ արտադրութեան միջոցների մասնաւոր սեպհականութիւնը պահպանուի կամ ո՛չ։ Նրա անկումը որոշ է։ Խնդիրը այժմ միայն այս է թէ պի՞տի թող տալ որ արտադրութեան միջոցների մասնաւոր սեպհականութիւնը իր հետ միասին անդունդը գլորի և՛ ընկերութեանը, թէ՞ ընկերութիւնը իր վրայից մի կողմ պիտի հետի այդ դժնդակ բեռը, և հողն ու արտադրութեան գործիքները ժողովրդին պիտի վերադարձնի, որպէսզի արտադրութիւնը լինի ո՛չ թէ շահի, այլ օգտակարութեան, գործածութեան համար, ու այն ժամանակ ազատ և բարեւացած շարունակի յառաջադիմութեան այն շաւիղը, որ բնաշրջական (էվոլիւցիոնեական) օրենքը վերապահած է նրան։

Ներկայ սերունդը կանգնած է այնտեղ, ուր ճանապարհը երկճղւում է։ Ճանապարհներից մէկը, աւերակների միջոցով, յետ է տանում դէպի բարբարոսութիւն. միւսը՝ դէպի յառաջ, դէպի Սոցիալիստ Հասարակապետութիւն։

Միացեալ-Նահանգների, ինչպէս և ամբողջ կապիտալիստական ազգերի, բուրժուազական բոլոր քաղաքական կուսակցութիւնները մեզ տանում են դէպի առաջին ճանապարհը։

Սոցիալ-Դէմոկրատ Բանուոր Կուսակցութիւնն է, որ ամէն տեղ միայնակ մատնանիշում է այն միջոցը, որ տանում է դէպի վերջին ճանապարհը *։

* Այդպիսի մի կուսակցութիւն է և՛ Հնչակեան Կուսակցութիւնը։ Ծ. Թ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Հարստութիւն. — Ընթացիկ լեզուով՝ հարստութիւն նշանակում է փարթամութիւն, ընչաւէտութիւն, դրամատէրութիւն։

Այլ է տնտեսագիտութեան մէջ. — նիւթական ամէն ինչ, որ մարդկային ո՛ և է կարիքին բաւականութիւն է տալիս և ընդունակ է ծախուելու, գնուելու և վաճառուելու՝ կոչւում է հարստութիւն. օրինակ՝ հաց, ածուխ, զգեստ, և այլն։

Արտադրել, արտադրութիւն, (արդիւնաբերութիւն). — Իր բազմատեսակ պէտքերին բաւականութիւն տալու համար՝ մարդը ամէն ինչ պատրաստ չի գտնում բնութեան մէջ։ Բնութեան մէջ գտնուածը հազիւ կարող է նրա մի քանի տարրական կարիքներին բաւականութիւն տալ. օրինակ՝ օդը։ Կան երկիրներ, ուր մարդս ամբողջ տարին բնութիւնից է ստանում իր տաքութեան կարիքը. կան երկիրներ էլ, ուր բնութիւնը տարուայ մի եղանակին է միայն մատակարարում նրա այդ կարիքի բաւականութիւնը...։ Բնութիւնը երբէմն մարդուն մատակարարում է հաւեւ ծառի փչակներ, քարանձաւներ եւն.։

Ապրելու համար նոյն իսկ ստորին էակները մեծ ջանք են թափում։ Ապրելու այդ ջանքը, այդ ճիգը մենք տեսնում ենք բուսական կեանքի մէջ։ թէեւ անգիտակից, բայց անվիճելի եռանդով։ Կենդանիների մէջ ապրելու ջանքը բնազդական, գիտակցական եւ կամաւոր է. իսկ մարդու մէջ ոչ միայն գիտակցական եւ կամաւոր է, այլ մեթոդաւոր, կարգաւորուած եւ բարդ։

Արտադրել (արդիւնաբերել) կոչանակի բնութեան գերկից հանել օգտակարութիւններ մարդու համար։ Մարդը բնութեան մէջ եղած առարկաների ձեւը եւ տեղը փոխում է ու նրան տալիս է զանազան յատկութիւններ՝ իր կարիքներին բաւականութիւն տալու համար,—այդ գործողութիւնը կոչւում է արտադրել եւ արդիւնքը՝ արտադրութիւն։

Հ. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Հ. Հ. Публичная Библиотека
7/3 1922
ԱՆՈՒԱՆ, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հ. Հ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ — . . . . . .

ԳԼՈՒԽ Ա. — **Վանառականութիւն եւ վարկ:** — Վանառականներ կապիտալ, վաշխառուներ կապիտալ, ճարտարագործական կապիտալ — Վանառականութեան յարաբերութիւնը արտադրութեան կապիտալիստական սիստէմի նկատմամբ — Վաշխառութեան յարաբերութիւնը արտադրութեան կապիտալիստական սիստէմի նկատմամբ Վարկի հասատութիւններ (բանկերի) յարաբերութիւնը արտադրութեան կապիտալիստական սիստէմի վերաբերմամբ: 5—12

ԳԼՈՒԽ Բ. — **Աշխատանքի բաժանումը եւ մրցումը:** — Աշխատանքի բաժանումը կապիտալիստական դասակարգի բանկերի մէջ — Ազատ մրցումը կապիտալիստական դասակարգի բանկերի մէջ: 12—16

ԳԼՈՒԽ Գ. — **Շահ:** — Թէ կապիտալիստական դասակարգը ի՞նչ կերպով է իր շահը համում գործաւոր դասակարգից — Թէ ինչու գործաւոր դասակարգից վեր առնուած յաւելեալ-արժէքը յարատեւորէն աճում է: 16—19

ԳԼՈՒԽ Դ. — **Կալուածատէր:** — Միանարկ տեսութեան պատրանքը: Կապիտալիստները ճարկադրուած են կալուածատէրերի հետ բաժանելու այն հարստութիւնը, որ նրանք վեր են առնում գործաւոր դասակարգից 19—24

ԳԼՈՒԽ Ե. — **Հարկեր:** — Թէ ինչպէս կառավարութիւնը սնանում է յաւելեալ-արժէքի իր բաժինը կապիտալիստական դասակարգից — Արտադրութեան կապիտալիստական սիստէմի թուլութիւնը անհրաժեշտ է դարձնում « կառավարութիւնը » — Թուլութիւն առաջին՝ կապիտալիստները վիճում էն շահի համար — այստեղից եւ դատարանների անհրաժեշտութիւն — Թուլութիւն երկրորդ՝ կապիտալիստ ազգերը իրենց երկրից դուրս պիտի տարածուին — այստեղից էլ պատերազմական նախարարութիւններ — Թուլութիւն երրորդ՝ շահագործողների եւ շահագործուողների միջեւ եղած հակամարտութիւնները — այստեղից էլ դատարանները եւ զօրքը՝ գործաւոր դասակարգին հպատակութեան մէջ պահելու համար — Թուլութիւն չորրորդ՝ ոնրի ստեղծումն, այստեղից էլ բանտերը, զգաստարանները, ապաշխարանները: 24 - 30

ԳԼՈՒԽ Զ. — **Շահի սակի իջնելը:** — Վաղուն տարի առաջ գործ սկսելու համար քիչ դրամագլուխ էր պահանջուում— Կապիտալի եւ յաւելեալ-արժէքի արագ աճումը—Շահի սակի վարիջնելը կապիտալիստի եկամուտի նուազումն չի նշանակում. 30 – 35

ԳԼՈՒԽ Է. — **Մեծ արտադրութեան աճումը — Սէնդիկատներ եւ թրստներ:** — Շատիղները որ տանում են դէպի թրստ — Կապիտալիստը դառնում է կտրոն-կտրող — Բաժնեֆիրական ընկերութիւնները երեւում են եւ կապիտալիստի օգտակարութիւնը վերջանում է— Փոքր կապիտալիստները կախումն ունին մեծ կապիտալիստներից — Վաճառանոցի համար կապիտալիստների միջեւ եղած մրցման հետեւանքը. 35—46

ԳԼՈՒԽ Է. — **Ճարտարագործական տագնապներ:** Ճարտարագործական տագնապների աղբիւրը — թէ ինչու տագնապը անխնայ է ծախու համար արտադրութեան առաջին շրջանին մէջ — Նորագոյն վաճառականութեան յարաբերութիւնը դէպի ճարտարագործական տագնապների մեխանիզմը կապիտալիզմի ներքոյ - Տագնապները մշտական են դառնում — միջազգային թրստը չի ոչնչացնում տագնապը: 46—60

ԳԼՈՒԽ Թ. — **Քրոնիկ գերարտադրութիւն:** — Աշխատանքի յարանուն արտադրականութեան յարաբերութիւնը դէպի գերարտադրութիւնը — Վաճառականական եւ երկրային ընդարձակութեան յարաբերութիւնը դէպի գերարտադրութիւնը — Թէ ինչպէս կապիտալիզմը փորում է իր սեպհական գերեզմանը — Կապիտալիստական դասակարգը լրացրել է իր միսսիան — Սոցիալիստական հասարակապետութիւնը անխուսափելի: 60—66

ՅԱՒԵԼՈՒԱԾ 67

ՀՀ Ազգային գրադարան
NL0202557

Կ. ԿԱՈՒՑԿԻ

"ԳՈՐԾԱՒՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ"

(ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԸ)

Թարգմանեց

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

Գինն 4 30 սան

Կ. ԿԱՈՒՑԿԻ

«ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ»

Թարգմանեց

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

Գինն 4 30 սան

Մամուլի տակն է և շուտով լոյս կտեսնի

"ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ"

Յաջորդաբար լոյս պիտի տեսնեն, Ս. Սապահ-Գիւ
Թարգմանութեամբ, Կ. Կաուցկու. Հետևեալ գրքոյկները

"ԴԱՍԱԿԱՐԳԱՑԻՆ ԿՌԻՒԸ"

"ՍՕՑԻԱԼԻՍՏ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ"